

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >>

1. ՆԻԿՈԼԱՅ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ	
Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման արդի հիմնախնդիրները	2
2. ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	
«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը	8
3. ԳԱՅԱՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	
Հանցագործ վարքի նկատմամբ սոցիալական վերահսկողության խնդիրը արդի հայ հասարակությունում	17
4. ՎԱՀՐԱՄ ԹԱՄԱԶՅԱՆ	
Ազգերի ինքնորոշումը և գլոբալ քաղաքականությունը	23
5. ՍՈՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ	
Տեղեկատվական պատերազմի և Հայաստանի Հանրապետության միջազգային քաղաքականության հիմնախնդիրները արդի հայ քաղաքական հրապարակախոսությունում	28
6. ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ	
Հափշտակության հանցակազմի օբյեկտիվ կողմը	35
7. ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ	
Անձի կամ մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ (ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ)	43
8. ԱՐՄԵՆ ՂՈՒԲԱՍԱՐՅԱՆ	
Վերահսկողությունը ՀՀ ֆինանսական վերահսկողության գերագույն ատյանի՝ վերահսկիչ պալատի կողմից	47
9. СУМБАТ СУМБАТЯН	
Проблемы реализации наказания несовершеннолетних посредством применения принудительных мер воспитательного характера	55
10. DIANA GHAZARYAN	
Comparison of precedent in Armenia and united kingdom	58

ՆԻԿՈԼԱՅ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարի տեղակալ

ՊԱՏԺԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սկիզբը՝ նախորդ համարում:

Ինչպես հիշատակվել էր, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտները պայմանականորեն կարելի է դասակարգել ըստ ձևերի՝ դատական, արտադատական և խառը: Խառը ձևը ենթադրում է, որ բանտի վարչակազմի և դատարանի միջև գոյություն ունեն միջանկյալ հանձնաժողովներ (բյուրո, կոմիտե, խորհուրդ և այլն): Եթե փորձենք զուգահեռներ տանելով վերլուծել պայմանական վաղաժամկետ ազատման արտադատական և խառը ձևերում գոյություն ունեցող հանձնաժողովների էությունը և գործունեության սկզբունքները, ապա կարող ենք ասել, որ ուսումնասիրված հանձնաժողովները հիմնականում ունեն սոցիալական ուղղվածություն և դրանց գործունեության հիմնական սկզբունքներն իրավական առումով ամրագրված են: Փորձենք մանրամասնել:

Անդրադառնալով պատժի պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի արտասահմանյան փորձին՝ խնդիր է հանդիսանում նաև ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում նշված ինստիտուտին վերաբերող հարաբերությունների կարգավորումը: Նշված ինստիտուտին վերաբերող հիմնական իրավահարաբերությունները նախևառաջ կարգավորվում են ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածով¹, իսկ պայմանական վաղաժամկետ ազատման հիմքերը, պայմանները և կարգը նախատեսված են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածով²:

Պայմանական վաղաժամկետ ազատում հնարավոր է միայն այնպիսի պատժատեսակների կրումից, ինչպիսիք են ազատազրկումը (որոշակի ժամկետով կամ ցմահ) կամ կարգապահական գումարտակում պահելը, ընդ որում՝ մյուս պատժատեսակներից պայմանական վաղաժամկետ ազատումը պարզապես աննպատակահարմար է: Միաժամանակ հատկանշական է այն, որ պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում անձը կարող է լրիվ կամ մասնակի ազատվել լրացուցիչ պատժից:

Պայմանական վաղաժամկետ ազատման համար հիմք կարող է հանդիսանալ դատարանի համոզվածությունը, որ դատապարտյալն ուղղվելու համար կարիք չունի նշանակված պատժի մնացած մասը կրելու: Բացի այդ, դատարանը հաշվի է առնում դատապարտյալի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը: Այդ հանգամանքին կարևոր նշանակություն է տալիս նաև Հանձնարարականը, որի 8-րդ կետի համաձայն՝ պայմանական ազատված անձանց շրջանում ռեցիդիվի ռիսկը նվազեցնելու նպատակով պետք է հնարավոր դարձվի նրանց նկատմամբ մի շարք անհատական պայմանների պարտադիր կիրառումը, որոնց թվում է «փոխհատուցում վճարելը կամ տուժողներին այլ ձևով փոխհատուցելը» (այդ ոչ թե հայցից բխող պարտավորությունները):

Պետք է առանձնակի ուշադրություն դարձնել դատապարտյալի ուղղված լինելու հանգամանքը ճշտորեն որոշելու հարցին: Դատապարտյալի ուղղման ցուցանիշները կախված են պատժի առանձնահատկություններից: Առավել լուրջ պահանջներ ներկայացվում են ազատազրկում կրող դատապարտյալներին: Մասնավորապես, նման ցուցանիշներ կարող են լինել ազատազրկման պայմանների պահանջների կատարումը, ուղղիչ հիմնարկի վարչակազմի կողմից խրախուսանքի միջոցների արժանացած լինելը, վերաբերմունքը հանձնարարված առաջադրանքներին, ընդհանուր կրթական և մասնագիտական ունակությունների բարձրացման նպատակամղվածությունը և այլն: Դատապարտյալի ուղղման մասին եզրակացությունը պետք է հիմնվի ոչ միայն պատժի կրման ընթացքում նրա վարքագծի, այլև՝ նրա անձի և հանցագործության բազմակողմանի գնահատման վրա: Նշվածը հաստատվում է նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածով, որի համաձայն՝ պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մարմնի կամ հիմնարկի վարչակազմը լսում է դրական բնութագրվող և տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման հարցը:

Հարկ է նշել, թե ինչպես է անդրադառնում այս հարցերի կարգավորմանը Հանձնարարականը: Հանձնարարականի 12-ից 15-րդ կետերը նվիրված են պայմանական (վաղաժամկետ) ազատման նախապատրաստմանը: Մասնավորապես, նշվում է, որ պայմանական (վաղաժամկետ) ազատման նախապատրաստումը պետք է կազմակերպվի բոլոր համապատասխան անձանց հետ սերտ համագործակցությամբ, ովքեր աշխատում են բանտում և ներգրավված են հետազատման վերահսկողությանը, և պետք է եզրափակվի նվազագույնի կամ սահմանված ժամկետի ավարտից առաջ: Բանտային ծառայությունները պետք է երաշխավորեն, որ դատապարտյալները կարողանան մասնակցել համապատասխան նախազատման ծրագրերի, միաժամանակ խրախուսվեն մասնակցություն ունենալու կրթական և ուսուցողական դասընթացներին, որոնք նրանց կնախապատրաստեն հասարակության մեջ ապրելուն: Ազատագրված դատապարտումների իրագործման համար այնպիսի հատուկ մոդալությունները, ինչպիսիք են կիսաազատությունը, բաց ռեժիմները (նկատի է առնվում բաց տեսակի ուղղիչ հիմնարկը) կամ խցերից դուրս գտնվող վայրերը, պետք է օգտագործվեն դատապարտյալներին հասարակության մեջ վերաբնակեցնելուն հնարավորինս նախապատրաստելու նպատակով:

Պայմանական (վաղաժամկետ) ազատման նախապատրաստումը պետք է ներառի նաև դատապարտյալներին պահելը, նրանց ընտանիքի և մերձավոր հարաբերակցվող անձանց հետ կապերի հաստատումը և վերահաստատումը, այն ծառայությունների, կազմակերպությունների և կամավոր միավորումների հետ կապերի հաստատումը, որոնք կարող են աջակցել պայմանական (վաղաժամկետ) ազատված դատապարտյալներին հասարակության մեջ ապրելը կանոնակարգելու գործում: Այս առումով, օրենսդրորեն պետք է սահմանվեն ազատագրված վայրը լքելու տարբեր ձևեր:

Պետք է խրախուսվի համապատասխան հետազոտման պայմանների և վերահսկողության միջոցների վաղ ուսումնասիրությունը: Հնարավոր պայմանները, օգնությունը, որը կարող է տրամադրվել, հսկողության պահանջները և այն իրականացնելը չհաջողվելու հնարավոր հետևանքները

պետք է հանգամանալից բացատրվեն դատապարտյալներին և քննարկվեն նրանց հետ:

Բացի այդ, ըստ Հանձնարարականի՝ այն չափանիշները, որոնց դատապարտյալները պետք է համապատասխանեն պայմանական (վաղաժամկետ) ազատվելու համար, պետք է լինեն հստակ, որոշակի և իրական: Մասնավորապես, մասնատիպ չափանիշներ են դատապարտյալի անձը, սոցիալական և տնտեսական հետևանքները, ինչպես նաև՝ վերականգնողական ծրագրերի մատչելիությունը:

Հետևաբար՝ դատապարտյալի ուղղված լինելու և պատժի հետագա կրման անհրաժեշտության բացակայության մասին եզրակացությունը պետք է կազմվի դատապարտյալների հետ նրանց հասարակություն վերադարձնելուն ուղղված աշխատանք կատարելու, ինչպես նաև՝ դատապարտյալի անձի և նրա կողմից կատարված հանցագործության բազմակողմանի և ամփոփ ուսումնասիրության հիման վրա:

Ենթադրվում է, որ դատարանը մնան եզրակացության կարող է հանգել միայն պատժի նշանակված ժամկետի որոշակի մասը դատապարտյալի կողմից կրելուց հետո: Վերջինս էլ հանդիսանում է պատժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման պարտադիր պայման: Այս կապակցությամբ Հանձնարարականի 6-րդ կետը սահմանում է, որ «նվազագույն կամ սահմանված ժամկետը չպետք է այնքան երկար լինի, որ պայմանական ազատման նպատակին հնարավոր չլինի հասնել»:

ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսվում են հանցագործության ծանրության աստիճանից կախված տարբերակված ժամկետներ: ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

1) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը,

2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը,

3) առանձնապես ծանր հանցագործության համար, ինչպես նաև նախկինում պայմանական վաղաժամկետ ազատված անձի (եթե պայմանական վաղաժամկետ ազատումը վերացվել է օրենսգրքի 76-րդ հոդվածի վեցերորդ մասով նախատեսված հիմքերով) նկատմամբ նշանակված

պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը,

4) նշանակված պատժի ոչ պակաս, քան երեք քառորդը՝ օրենսգրքով նախատեսված որոշակի հանցագործությունների դեպքում:

Վերոշարադրյալից հետևում է, որ նախկինում պայմանական վաղաժամկետ ազատված անձը, որի նկատմամբ այդ ազատումը վերացվել է, կարող է կրկին պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե փաստացի կրել է պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը: Պատժի նպատակներից ելնելով՝ նշված նորմի առկայությունը արդարացված է, քանի որ դատապարտյալների կողմից նման վարքագիծ դրսևորելը վկայում է այն մասին, որ վերջիններս չեն արդարացրել իրենց նկատմամբ նախկինում դրսևորված վերաբերմունքը և դեռևս չեն ուղղվել: Օրենսգրքում առկա է նաև վերապահում, որ ցանկացած պարագայում անձի կողմից ազատազրկման ձևով պատիժը փաստացի կրելու ժամկետը չի կարող 3 ամսից պակաս լինել: Այս դրույթը ևս արդարացի է, քանի որ այս ժամկետը անհրաժեշտ է պատիժը կատարող մարմնին՝ համոզվելու համար դատապարտյալի իրական, այլ ոչ թե կեղծ ուղղման կապակցությամբ:

Օրենսդիրը փաստորեն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորություն է տալիս դատակարգման ցանկացած խմբի դատապարտյալի համար, որը ՀՀ քրեական օրենսգրքի նվաճումներից է, և որն էլ էականորեն ընդարձակել է պատժից ազատելու այս տեսակի կիրառման սահմանները՝ տարածելով այն նույնիսկ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ: Մասնավորապես, ցմահ ազատազրկման նշանակումը վկայում է ինչպես կատարված արարքի, այնպես էլ՝ այն կատարող անձի հասարակական մեծ վտանգավորության մասին: Ուստի, օրենսդիրը սահմանում է, որ նման անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ վերջինիս կողմից հետագա պատիժը կրելու նպատակահարմարությունն առկա չէ, և դատապարտյալը փաստացի կրել է ազատազրկման ոչ պակաս, քան քսան տարին:

Յմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ պայմանական վաղաժամկետ ազատման կիրառման անհրաժեշտության մասին է վկայում նաև Հանձնարարականի 4-րդ կետի հետևյալ դրույթը. «ազատազրկման վնասակար հետևանքները նվազեցնելու և դատապարտյալների այն պայմաններով վերականգնվելու նպատա-

կով, որոնք փորձում են երաշխավորել հասարակության «արտաքին կողմի» անվտանգությունը, օրենքը պայմանական վաղաժամկետ ազատումը պետք է հասանելի դարձնի բոլոր դատապարտյալների, ներառյալ՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար»: «Յմահ ազատազրկվածները» երբևիցե չպետք է զրկվեն ազատում ստանալու հույսից: Ըստ Հանձնարարականի, նախ և առաջ, ոչ ոք չի կարող հիմնավորել, որ ցմահ ազատազրկման դատապարտվածները միշտ վտանգավոր կմնան հասարակության համար: Երկրորդը, այն անձանց պահելը, ովքեր չունեն ազատման հույս, առաջացնում է կառավարման խիստ խնդիրներ համագործակցության դրդապատճառներ ստեղծելու պայմանների և վնասակար վարքագիծը ուղղելու, ինչպես նաև անհատական զարգացման ծրագրեր կազմելու, պատժի պլաններ կազմակերպելու և անվտանգության ապահովման գործում: Այն երկրները, որոնց օրենսդրությունը նախատեսում է ցմահ ազատազրկումը որպես պատժատեսակ, պետք է նաև ստեղծեն այդ պատիժը տարիներ հետո վերանայելու հնարավորություններ կանոնավոր ու սահմանված պարբերականությամբ, որպեսզի սահմանեն՝ արդյոք ցմահ ազատազրկման դատապարտված անձը կարող է կրել պատժի մնացած մասը հասարակության մեջ և ինչ պայմաններով ու ինչպիսի վերահսկողության միջոցներով:

Պայմանական վաղաժամկետ ազատման հարցերն ուսումնասիրելու և Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից դրանց մարդու և հասարակության շահերից բխող և արդյունավետ լուծումներ առաջարկելու նպատակով աշխատանք է տարվել և տարվում նաև ԵԽ-ի կողմից, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջին տարիներին պայմանական ազատման (պայմանական վաղաժամկետ ազատում) ինստիտուտի կիրառումը կրճատվել է մի շարք անդամ պետություններում: Դրա պատճառները հիմնականում երկուսն են, որոնք ներառում են դատապարտյալների (ազատազրկման մեջ գտնվող անձանց) շրջանում այնպիսի կառուցվածքային փոփոխությունները, ինչպիսիք են՝ դատապարտյալների բարձր տոկոսը, որոնք դատապարտվել են բռնության, թմրադեղերի հանցավոր շրջանառության, սեքսուալ չարաշահման կամ սպանության կատարման համար և հանցավորության որակի փոփոխումը, ինչպես նաև այն մարմինների դիրքորոշման փոփոխությունը, որոնք պատասխանատու են պայմանական

ազատման վերաբերյալ որոշում ընդունելու համար: Եվրոպայի խորհրդի մի շարք պետություններում պայմանական (վաղաժամկետ) ազատումն առկա է տեսականորեն, բայց ոչ գործնականում (օրինակ՝ Վրաստանի Հանրապետություն): Դատավորաբար պատճառաբանվում է այն փաստով, որ պայմանական ազատված հանցագործություն կատարած անձանց վերահսկողության ծառայությունները դեռ լիարժեք չեն գործում կամ բարձր է ռեցիդիվի մակարդակը:

Այս իրավիճակը բացասական է և փոփոխման կարիք ունի այն ժամանակ, երբ բոլոր եվրոպական պետությունները հանդիպում են լուրջ խնդիրների հանցավորության և դրա կրկնակիությունը նվազեցնելու, ինչպես նաև ազատագրկման վայրերի ծանրաբեռնվածությունը և բանտերի «բնակիչների» թիվը նվազեցնելու գործում: Եվրոպայի խորհրդի կողմից այս հարցերով տարվող աշխատանքը հստակ ցույց է տալիս, որ պայմանական ազատումը պետք է դիտվի որպես շատ արդյունավետ և կառուցողական միջոցներից մեկը, որը ոչ միայն նվազեցնում է ազատագրկման միջին տևողությունը, այլ նաև էականորեն աջակցում է հանցագործի՝ հասարակություն պլանավորված վերադարձին³:

Վերոհիշյալ պատճառները Քրեական խնդիրների եվրոպական կոմիտեին (CDPC) ստիպեցին տալ համապատասխան տեղեկանքի ձևով դրույթներ իր խորհրդատվական մարմիններից մեկին՝ Քրեակատարողական համագործակցության խորհրդին (PC-CP) պայմանական ազատման մասին ուսումնասիրություն իրականացնել՝ հանձնարարականի նախագիծ նախապատրաստելու նպատակով⁴:

Բացի այդ, PC-CP-ն իրականացնում է օրենսդրության և պայմանական ազատման օգտագործման վերաբերյալ ուսուցում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում: Այս ուսուցումը հիմնված է Հիլդա Թուրեքսի գլխավոր հարցաշարին ուղարկված 36 պատասխանների վերլուծությունների վրա՝ Փյեր Տուրնիերի աջակցությամբ: PC-CP-ն կազմել է հանձնարարական և բացատրական հուշագիր, որին Հիլդա Թուրեքսի վերոհիշյալ վերլուծությունը կցվում է որպես հավելված⁵:

Այսպիսով, Եվրոպայի խորհրդի Նախարարների Կոմիտեն խրախուսում է միջազգային համագործակցությունն ընդհանուր սկզբունքների շուրջ պատիժների կատարման բնագավառում, որը

պետք է լինի իր անդամ պետությունների կողմից ընդունված հիմնարար արժեքներին համապատասխան՝ հարգելով մարդու իրավունքները, ժողովրդավարության սկզբունքները և օրենքի տառը: Եվ դրանով հանդերձ, պայմանական ազատումը ապահովելով պլանավորված, աջակցված և հսկվող վերախնտեզրումը հասարակությանը հանդիսանում է հանցագործությունների կրկնակիությունը կանխելու և դատապարտյալների վերականգնման առավել արդյունավետ և կառուցողական միջոցներից մեկը⁶:

Ինչպես վերը նշվել է, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի բովանդակության վերլուծությունից բխում է, որ Հայաստանում գործում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի խառը ձևը: Իհարկե, քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացին զուգահեռ, նախկին դատական ձևից անցումը խառը ձևին կարելի է դիտել որպես առաջընթաց քայլ (անկախ ժամանակային նպատակահարմարության հարցին անդրադառնալու): Սակայն խիստ կարևորվում է այն հանգամանքը, թե որքանով է խառը ձևի ինստիտուտի գործունեությունը Հայաստանում համապատասխանում միջազգային չափանիշներին և անհրաժեշտ գործելակերպին: Ուսումնասիրությամբ կարելի է հանգել այն դիքորոշմանը, որ այս կապակցությամբ Հայաստանում դեռևս առկա չեն կարևորագույն երկու սկզբունքներ, մասնավորապես, Անկախ հանձնաժողովների⁷ սոցիալական ուղղվածությունը և գործունեության սկզբունքները:

Նախ, ինչպես արդեն հիշատակվել է, պայմանական վաղաժամկետ ազատման արտադատական և խառը ձևերում հանձնաժողովները հիմնականում ունեն սոցիալական ուղղվածություն, այսինքն՝ հանձնաժողովներում, եթե նույնիսկ ներգրավված են նախաքննություն իրականացնող, բանտային ծառայությունների վերադաս կամ ուժային այլ մարմինների ներկայացուցիչներ (որը բացարձակ ցանկալի չէ), ապա վերջիններիս անդամությունը քանակային կամ տոկոսային որակ չի ստեղծում: Դրա փոխարեն նման հանձնաժողովներում ընդգրկված են հիմնականում հոգեբույժներ, պրոբացիոն ծառայողներ (սոցիալական աշխատողներ), և այլ սոցիալական ուղղվածության մարմինների կամ հասարակության ներկայացուցիչներ, որոնց նպատակներից է պայմանական վաղաժամկետ ազատման տրամադրման դեպքում «հատուկ պայմաններով» աջակցելը, «աջակցու-

թյան և վերահսկողության միջոցներով», «որոնք կոչված կլինեն հեշտացնել և հաստատել ազատվածի վերադարձը նորմալ կյանքի»⁸:

Ինչ վերաբերում է Հայաստանում վերը նշված հարցի կարգավորմանը, ապա հանձնաժողովների գործելակերպում կարևորվում են ոչ թե հիշյալ համգամանքները, այլ կատարած հանցագործության ծանրության աստիճանը: Այդ են վկայում կատարված ուսումնասիրության արդյունքները, որոնց համաձայն՝ 2009թ. հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների⁹ կողմից Անկախ հանձնաժողովների քննարկմանը ներկայացված 1460¹⁰ դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման հարցով հավանություն չի տրվել 924-ին, իսկ հավանություն է տրվել 536-ին, այն էլ այն դեպքում, երբ հիմնականում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար անհրաժեշտ ժամկետները լրացած են եղել վաղուց, և տվյալ դատապարտյալները պետք է կրեին պատժի շատ քիչ ժամկետներ: Այս գործելակերպն իր հերթին հակասում է Հանձնարարականի 6-րդ կետի պահանջներին (այն է՝ նվազագույն կամ սահմանված ժամկետը չպետք է այնքան երկար լինի, որ պայմանական ազատման նպատակին հնարավոր չլինի հասնել):

Երկրորդ, ինչպես ևս հիշատակվել է, պայմանական վաղաժամկետ ազատման արտադատական և խառը ձևերում հանձնաժողովների գործունեության հիմնական սկզբունքներն իրավական առումով ամրագրված են, այսինքն՝ տրվում են այն չափանիշները, որոնցով առաջնորդվում են հանձնաժողովի անդամները հարցերի քննարկման և որոշումների կայացման ժամանակ: Նման գնահատման չափանիշներ սահմանված են նաև ՀՀ օրենսդրությամբ՝ քրեակատարողական հիմնարկների վարչակազմների համար, երբ պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը լսում է դրական բնութագրվող և տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու հարցը¹¹: Մասնավորապես, սահմանվում է, որ նման չափանիշներ են՝ դատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ, դատապարտյալի վտանգավորության առումով ռիսկայնության աստիճանը, կարգապահությունը, մասնակցությունը կրթական, մշակութային և այլ ծրագրերին, ներգրավվածությունը աշխատանքին, ապագայի

նկատմամբ վերաբերմունքը, կյանքի ծրագրերը, ուղղման աստիճանը: Կարելի է ասել, որ պատիժը կատարող մարմնի գործողություններն արդեն իսկ «չափելի են», այսինքն՝ հնարավոր է եզրակացնել, թե արդյո՞ք ճիշտ է գնահատել պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը, երբ լսել է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու հարցը: Համապատասխան չափանիշներ (դատարանի հայեցողության սահմաններում) սահմանված են նաև դատարանի համար. դրա համար հիմք կարող է հանդիսանալ դատարանի համոզվածությունը, որ դատապարտյալն ուղղվելու համար այլևս կարիք չունի նշանակված պատժի մնացած մասը կրելու, դատապարտյալի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը և այլն¹²: Սակայն նույնը չենք կարող ասել Անկախ հանձնաժողովների գործունեության համար, որոնց գործունեության ընթացքում որոշումների կայացման համար որևէ չափանիշ սահմանված չէ, որն էլ իր հերթին հանգեցնում է հաճախ ոչ ճիշտ որոշումների կայացմանը: Ավելին, Անկախ հանձնաժողովների գործունեությունը ներառում է մի գործելակերպ, որն ընդհանրապես անընդունելի է և հակասում է Հանձնարարականի սկզբունքներին: Մասնավորապես, ինչպես վերը նշվել է, Հանձնարարականի 8-րդ կետի համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատելիս պետք է հնարավոր դարձվի դատապարտյալների նկատմամբ մի շարք անհատական պայմանների կիրառումը, որոնց թվում է «փոխհատուցում վճարելը կամ տուժողներին այլ ձևով փոխհատուցելը»: Իսկ Հայաստանում այս սկզբունքն ուղակիորեն նույնացվել է հայցից բխող պարտավորությունների կատարման հետ, նույնիսկ այն դեպքում, երբ դատապարտյալն արդեն իսկ օրենքով սահմանված կարգով սնանկ է ճանաչվել:

Անկախ հանձնաժողովների գործունեության գործելակերպի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նիստերի ժամանակ դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատմանը հավանություն տալու կամ մերժելու հետ կապված հանձնաժողովի գործունեությունը որևէ ձևով չի արձանագրվում, յուրաքանչյուր դատապարտյալի հարցի քննարկման արդյունքում իրականացվում է փակ գաղտնի քվեարկություն, որի արդյունքների վերաբերյալ ստորագրությամբ տեղեկացվում է դատապարտյալին՝ առանց պատճառաբանված որոշում կայացնելու: Սա իր հերթին հակասում է Հանձնարարականի ընդհանուր տրամաբանու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյանն ու սկզբունքներին: Մասնավորապես, Հանձնարարականի 23-րդ կետի համաձայն՝ միայն օրենքով նախատեսված բացառիկ հանգամանքները կարող են հնարավոր դարձնել ազատման հետաձգումը, որն իր հերթին նշանակում է, որ այդ չափանիշներն այնքան հստակ պետք է սահմանված լինեն, որպեսզի դրանց չհամապատասխանելը հնարավոր լինի դարձնել չափելի: Իսկ Հանձնարարականի 32-րդ կետի դ) ենթակետի համաձայն՝ պայմանական ազատում շնորհելու, հետաձգելու կամ վերացնելու մասին որոշումները, ինչպես նաև դրանց կից պայմանները սահմանելու կամ փոխելու մասին որոշումները պետք է ընդունվեն օրենքով սահմանված մարմինների կողմից հիմնավոր պատճառաբանությամբ:

Հատկանշական է նաև խնդրի քննարկումը ֆինանսական տեսանկյունից: Համապատասխան տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղի է ունենում դատապարտյալների (ինչպես նաև կալանավորված անձանց) ընդհանուր թվաքանակի տարեց տարի ավելացում (դատապարտյալների և կալանավորված անձանց ընդհանուր թվաքանակը Հայաստանում 2006, 2007, 2008, 2009, 2010 թվականների հունվար ամիսների դրությամբ կազմել է համապատասխանաբար 2873, 3083, 3539, 3965, 4313 մարդ, իսկ 2010թ. մարտի 1-ի դրությամբ՝ արդեն 4523 մարդ), որի պատճառներից մեկը հանդիսանում է պայմանական վաղա-

ժամկետ ազատման ինստիտուտի ոչ լիարժեք գործելը: Մեխանիկորեն դատապարտյալների թվաքանակի ավելացումը հանգեցնում է նաև պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների ավելացմանը: Եթե մեկ դատապարտյալի պահման տարեկան ծախսը կազմում է մոտ 130000 դրամ (նախատեսված 2010 թվականի պետական բյուջեով), ապա կարելի է պատկերացնել, թե դատապարտյալների թվաքանակի նման աճի դեպքում պատժի՝ որպես պետական հարկադրանքի կատարումը որքան ծախսատար է դառնում պետության համար:

Այսպիսով, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի՝ Հայաստանի Հանրապետությունում լիարժեք կիրառման համար անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնցով կանրագրվեն Անկախ հանձնաժողովների սոցիալական ուղղվածությունը և դրանց գործունեության՝ որոշումների կայացման չափանիշները: Տվյալ հանգամանքով էլ պայմանավորված՝ հիմք կդրվի ոչ մոտ ապագայում անցում կատարել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման արտադատական ձևին, երբ ավելի ընդգրկուն կլինի քաղաքացիական հասարակության մասնակցությունը նման որոշումների կայացմանը:

¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 2003թ. ապրիլի 18-ին, ՀՕ-528-Ն, օրենսգրքի 76-րդ և 94-րդ հոդվածներ:

² Տե՛ս ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 2004թ. դեկտեմբերի 24-ին, ՀՕ-60-Ն:

³ Տե՛ս Հանձնարարական թիվ (99)22՝ կապված բանտերի ծանրաբեռնվածության և բանտերի «բնակիչների» թվի նվազեցման հետ:

⁴ PC-CP սկսել է իր աշխատանքը 2000 թվականին և ավարտել է այն 2003 թվականի փետրվարին:

⁵ Ներկայացվել է CDPC-ին 2003թ. հունիսին:

⁶ Տե՛ս Բացատրական Հուշագիր պայմանական ազատման (պայմանական վաղաժամկետ ազատման) մասին ԵԽ Նախարարների Կոմիտեի (2003) 22 Հանձնարարականի վերաբերյալ:

⁷ Տե՛ս ՀՀ Նախագահի 2006թ. հուլիսի 31-ի «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-163-Ն հրամանագիրը:

⁸ Տե՛ս Ֆրանսիայի ՔԳՕ 731-րդ հոդվածը:

⁹ Տե՛ս ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի «Գատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման կարգը հաստատելու մասին» թիվ 1304-Ն որոշումը:

¹⁰ Քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների կողմից նշված ժամանակահատվածում քննարկվել է 2887 դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման հարցը, որից մերժվել է 1199-ը, իսկ մնացածը՝ հետաձգվել:

¹¹ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարի 2008թ. մայիսի 30-ի «Քրեակատարողական ծառայության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 44-Ն հրամանը:

¹² Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածը:

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ տնօրեն, իրավաբանական գիտությունների թեկնածու



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) առաջարկվող փոփոխություններն ու լրացումները պայմանավորված են այն հանգամանքով, որ անհրաժեշտ է այն համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն), Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (այսուհետ՝ միջազգային պայմանագիր), ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին: Հաշվի առնելով, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված է՝ եթե իրավական ակտում կատարվում են ծավալուն փոփոխություններ կամ լրացումներ, ապա իրավական ակտը կարող է ամբողջությամբ շարադրվել նոր խմբագրությամբ, ուստի առաջարկվում է ընդունել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» նոր օրենք:

Ամփոփ ներկայացնենք որոշ ակնհայտ հակասություններ և շտկման կարիք ունեցող դրույթներ:

Սահմանադրության 30.1 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ոչ ոք չի կարող գրկվել քաղաքացիությունից, ինչպես նաև քաղաքացիությունը փոխելու իրավունքից, մինևույն ժամանակ՝ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասը թույլատրում է վերոնշյալ հոդվածով ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների օրենքով սահմանափակում, եթե դա անհրաժեշտ է ժողովրդական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար, իսկ նույն

հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

Սակայն օրենքի 25-րդ հոդվածում նշված գրկման հիմքերը՝ ա. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք է բերել սույն օրենքի 13 հոդվածին (Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը) համապատասխան և, մշտապես բնակվելով արտասահմանում, յոթ տարվա ընթացքում առանց հարգելի պատճառների հյուպատոսական հաշվառման չի կանգնել, բ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք է բերել կեղծ տվյալների կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա, չեն համապատասխանում Սահմանադրության 43-րդ հոդվածում նշված սահմանափակման հիմքերին, իսկ երրորդ հիմքը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենսդրությունը խախտելով՝ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն, երկքաղաքացիության ինստիտուտի ամրագրմամբ, կորցրել է իր ակտուալությունը, և այլ հիմքեր էլ չեն կարող սահմանվել՝ հաշվի առնելով միջազգային պայմանագրերը, մասնավորապես՝ Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիայի 7-րդ և 8-րդ հոդվածները: Ելնելով վերոգրյալից և համադրելով միջազգային փորձն ու Հայաստանի Հանրապետության շահերը՝ նախագծում բացակայում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից գրկելու հետ կապված դրույթները, ինչպես նաև առաջարկվում է քաղաքացիության ձեռքբերման մասին իրավական ակտը չեղյալ ճանաչելու ընթացակարգ:

Համաձայն Սահմանադրության վերոնշյալ 30.1 հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի: Օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն այլ պետությանը հանձնելն արգելվում է՝ առանց որևէ բացառության: Մեր կողմից առաջարկվում է այս դրույթը շարադրել սահմանադրական խմբագրությամբ՝ հաշվի առնելով Սահմանադրության 43-րդ հոդվածը և Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածը. «այն անձինք, որոնք մեղադրվում են ցեղասպանություն կամ Կոնվենցիայի 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու մեջ, դատվում են այն երկրի իրավասու դատարանի կողմից, որի տարածքում կատարվել է այդ հանցագործությունը, կամ այնպիսի միջազգային քրեական դատարանի կողմից, որը կարող է իրավագործություն ունենալ սույն Կոնվենցիայի՝ այդ իրավագործությունը ճանաչած կողմերի նկատմամբ»:

Համաձայն օրենքի 13-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումի մերժումը կարող է չհիմնավորվել: Սակայն, համաձայն Սահմանադրության 27.1 հոդվածի, յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Ուստի մենք նախագծից հանել ենք «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումի մերժումը կարող է չհիմնավորվել» դրույթը:

Համաձայն օրենքի 13.1-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը, բացառությամբ միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի: Նշված մասերի միջև առկա է հակասություն. առաջին դեպքում Հայաստանի Հանրապետության երկքաղաքացուն չենք տարանջատում Հայաստանի

Հանրապետության քաղաքացու, իսկ երկրորդ դեպքում տարանջատում և սահմանափակումներ ենք նախատեսում Հայաստանի Հանրապետության երկքաղաքացու համար: Սակայն, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ երկքաղաքացիների համար արդեն իսկ նախատեսված են որոշ սահմանափակումներ, մեր կողմից առաջարկվող օրենքի նախագծում վերոնշյալ դրույթը բացակայում է:

Համաձայն օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձը տալիս է երդում, իսկ նույն հոդվածի 2-րդ մասում նշված է, որ առանց օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու և առանց հայերեն լեզվով բացատրվելու կարողության (պարզեցված կարգ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձը, որը ամուսնացել է Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ կամ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխա կամ որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, և 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, կամ որը ծագումով հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ, կամ 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից:

Երդման տեքստում սահմանված է, որ քաղաքացիություն ստացողը պարտավոր է հարգել հայերեն լեզուն, սակայն պարզ չէ, թե ի՞նչ ձևով է դրսևորվելու հայերեն լեզվի նկատմամբ նրա հարգանքը, այն դեպքում, երբ օրենքով սահմանված քաղաքացիության ձեռքբերման պարզեցված կարգով քաղաքացիություն կարելի է ստանալ առանց հայերեն լեզվով բացատրվել կարողանալու: Նախագծում նշված է, որ երդումը պետք է տրվի հայերեն լեզվով:

Համաձայն Սահմանադրության 11.3 հոդվածի՝ միայն ազգությամբ հայերն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերում պարզեցված կարգով: Սակայն օրենքում պարզեցված կարգ սահմանված է նաև ազգությամբ ոչ հայերի համար՝ չնայած այն հանգամանքին, որ մի-

ջազգային պայմանագրերի շրջանակներում հնարավորություն կա սահմանափակելու այդ անձանց քանակը (Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիայի 1-ին հոդված, Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին կոնվենցիայի 3-րդ հոդված):

Նախագծում պարզեցված կարգով քաղաքացիություն կարող են ստանալ միայն ազգությամբ հայերը, և այդ կարգը վերաբերում է միայն բնակության ժամկետին:

Նախագծում սահմանվել են նաև երեխայի նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն նշանակված լինելու դեպքում նրա քաղաքացիության հարցը կարգավորող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիների Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու գործընթացը կարգավորող քաղաքացիության հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերին համահունչ դրույթներ, որոնք բացակայում են օրենքում:

Օրենքում շատ են այն հոդվածները, որոնց վերնագրերն ու բովանդակությունը չեն համապատասխանում իրար. օրինակ՝ օրենքի 1-ին հոդվածը վերնագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ», սակայն հոդվածում չի տրված քաղաքացիության բնորոշումը, որը հակասում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասին, որտեղ նշված է՝ հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը:

Առկա են նաև բազում տերմինաբանական խնդիրներ, օրինակ՝ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է «ղիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններ» հասկացությունը, սակայն «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում օգտագործվում է «ղիվանագիտական ներկայացուցչություններ և հյուպատոսական հիմնարկներ» հասկացությունները և այլն:

Նախագծում առաջարկվում է այն մարմինը, որը լուծելու է ճանաչման, ծննդյան, երեխաների որդեգրման և խնամակալություն կամ հոգաբարձություն նշանակված լինելու հիմքերով քաղաքացիության ձեռքբերման հետ կապված հարցերը, այն մարմինը, որը Հայաստանի Հանրապետության Նախագահին է ներկայացնելու առաջարկություններ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու վերաբերյալ, ինչպես

նաև՝ քաղաքացիությունը փոխելու կամ քաղաքացիությունից դուրս գալու դեպքերում՝ զանգվածային լրատվության միջոցներով պարտադիր հայտարարություն հրապարակելու ընթացակարգ:

Նախագիծը մշակելիս մեր կողմից համակողմանի վերլուծության են ենթարկվել Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով սահմանված քաղաքացիության հետ կապված դրույթները, հաշվի է առնվել քաղաքացիության ոլորտում, ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային փորձը և միջազգային դատական պրակտիկան, ուստի ակնկալում ենք, որ նախագծի ընդունումը կապահովի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հետ կապված հասարակական հարաբերությունների ժամանակակից պահանջներին համապատասխան արդյունավետ կարգավորում:

Ստորև ներկայացնում ենք մեր կողմից մշակված օրենքի նախագիծը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

ՀՈՂՎԱԾ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը բնորոշվում է որպես անձի՝ Հայաստանի Հանրապետության հետ կայուն քաղաքական-իրավական կապ, որը արտահայտվում է փոխադարձ իրավունքներով և պարտականություններով:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման եւ դադարեցման կարգը սահմանվում է սույն օրենքով:

3. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով:

ՀՈՂՎԱԾ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մանագրերից, սույն օրենքից և Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով, ապա կիրառվում են այդ նորմերը:

ՀՈՂՎԱԾ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՐՄԱՆ ԿՐԻՏԵՐԻՆ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացի են սույն օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած անձինք:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հավասար են օրենքի առջև՝ անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերից, ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատություններն ու պարտականությունները:

ՀՈՂՎԱԾ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերն են՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը, իրավասու մարմինների կողմից ժամանակավորապես տրվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթը, իսկ մինչև 16 տարին լրանալը՝ նաև ծննդյան վկայականը:

ՀՈՂՎԱԾ 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԵԼՈՒ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

ՀՈՂՎԱԾ 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՆՈՒՅԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՆՈՒՅԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՒՐՄԱՆ ԿՐԻՏԵՐԻՆ

1. Հայաստանի Հանրապետությունից դուրս մշտապես բնակվելը ինքնին չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցմանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացու և օտարերկրյա քաղաքացու միջև ամուսնությունը կամ ամուսնալուծությունը ինքնին քաղաքացիության

փոփոխման չի հանգեցնում:

3. Ամուսիններից մեկի քաղաքացիությանը դադարեցումը ինքնին չի հանգեցնում մյուս ամուսնու քաղաքացիության դադարեցմանը:

ՀՈՂՎԱԾ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԳՈՒՐՄ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում և նրանից դուրս գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

2. Հայաստանի Հանրապետությունը նրա դիվանագիտական ներկայացուցչությունները, հյուպատոսական հիմնարկները և դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են պաշտպանել այլ պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները, ինչպես նաև՝ միջոցներ ձեռնարկել նրանց խախտված իրավունքները վերականգնելու համար՝ այդ պետությունների օրենսդրության, այդ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված միջազգային պայմանագրերի և միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած նորմերին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 8. ՕՏԱՐԵՐԿՐԻՅԱ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆԸ

1. Օտարերկրյա քաղաքացի է այլ պետության քաղաքացիություն ունեցող այն անձը, որը չունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

2. Քաղաքացիություն չունեցող անձը որևէ պետության քաղաքացի չհամարվող անձն է:

3. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենսդրությամբ:

4. Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելը և չի խոչնդոտում նրանց կողմից այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելուն:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԵՆՔԲԵՐՈՒՄԸ

ՀՈՂՎԱԾ 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԵՆՔԲԵՐՄԱՆ

ՀԻՍՔԵՐԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ձեռք է բերվում՝

- 1) քաղաքացիության ճանաչմամբ.
- 2) ծնունդով.
- 3) քաղաքացիություն ստանալու միջոցով.
- 4) քաղաքացիությունը վերականգնելու միջոցով.

5) քաղաքացիության խմբային ձեռքբերման միջոցով.

6) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով.

7) սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ՀՈՂՎԱԾ 10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳՅԻՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են ճանաչվում՝

1) Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին ՀԽՍՀ քաղաքացիները, ովքեր մինչև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ուժի մեջ մտնելը ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն կամ հրաժարվել են դրանից՝ սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում.

2) Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը դիմում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար.

3) Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող ազգությամբ հայ նախկին ՀԽՍՀ այն քաղաքացիները, ովքեր ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն:

ՀՈՂՎԱԾ 11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳՅԻՆԵՐԻՑ ԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱԳՅԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

2. Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

3. Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ:

4. Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե նա ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, կամ եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ եթե ծնողները մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետությունում:

ՀՈՂՎԱԾ 12. ՔԱՂԱՔԱԳՅԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱԳՅԻՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան, ում ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

ՀՈՂՎԱԾ 13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳՅԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԸ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած և գործունակ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթե՝

- 1) օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում.
- 2) կարող է բացատրվել հայերեն լեզվով եւ
- 3) ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Առանց սույն հոդվածի առաջին մասի 1-ին կետով սահմանված պահանջի պահպանման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայերը:

3. Առանց սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով, ինչպես նաեւ երկրորդ մասով սահմանված պահանջների պահպանման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է շնորհվել Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումն անձը անձամբ պետք է ներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը եւ բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, պատվին եւ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

քարի համբավին:

6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձը հայերեն լեզվով տալիս է հետևյալ երդումը. «Ես՝ (անուն-ազգանուն), դառնալով Հայաստանի Հանրապետության քաղաքացի, երդվում եմ հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետությանը, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները, պաշտպանել Հայաստանի Հանրապետության անկախությունը եւ տարածքային ամբողջականությունը: Պարտավորվում եմ հարգել Հայաստանի Հանրապետության պետական լեզուն, ազգային մշակույթը եւ սովորույթները»:

7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձը ստորագրում է երդման տեքստը:

ՀՈՂՎԱԾ 14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՔԱՊԱՔԱԳԻՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի է համարվում այն անձը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության քաղաքացիություն:

2. Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի են ճանաչվում նաև այն անձինք, որոնք 1995 թվականի հունվարի մեկից հետո, առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու, ձեռք են բերել այլ պետության քաղաքացիություն:

3. Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացին այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում պարտավոր է այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մեկամսյա ժամկետում հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին:

5. Սույն հոդվածի 3-րդ մասի պահանջի խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

ՀՈՂՎԱԾ 15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳՑԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցված անձի քաղաքացիությունը կա-

րող է վերականգնվել, եթե բացակայում են սույն օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հիմքերը, և եթե նրա քաղաքացիություն ձեռք բերելու մասին որոշումը չեղյալ չի ճանաչվել:

ՀՈՂՎԱԾ 16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳՑԻՈՒԹՅԱՆ ԽՍԲԱՅԻՆ ՉԵՈՒԲԵՐՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերումն իրականացվում է ներգաղթի և օրենքով սահմանված այլ դեպքերում՝ սույն օրենքով սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 17. ԵՐԵՒԱՅԻ ՔԱՂԱՔԱԳՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳՑԻՈՒԹՅՈՒՆ ՉԵՈՒԲԵՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած ծնողների մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

2. Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե՝

- 1) առկա է ծնողների համաձայնությունը.
- 2) նա մշտապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, եւ առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

ՀՈՂՎԱԾ 18. ԵՐԵՒԱՅԻ ՔԱՂԱՔԱԳՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

2. Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ քաղաքացիություն չունեցող անձ, ապա երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

3. Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե՝

- 1) առկա է երեխային որդեգրած ամուսինների համաձայնությունը.
- 2) նա մշտապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է Հայաստանի Հան-

րապետության քաղաքացի հանդիսացող որդեգրած ամուսնու համաձայնությունը կամ եթե նա քաղաքացիություն չունեցող անձ է:

ՀՈԴՎԱԾ 19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳՅԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԴԵՊՐՈՒՄ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են օտարերկրյա քաղաքացիներ կամ այնպիսի ամուսիններ, որոնցից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: Երեխայի քաղաքացիությունը կարող է փոխվել միայն որդեգրողների դիմումով:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են քաղաքացիություն չունեցող անձինք, կամ որդեգրած ամուսիններից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ քաղաքացիություն չունեցող անձ, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը:

ՀՈԴՎԱԾ 20. ԵՐԵՒԱՅԻ ՔԱՂԱՔԱԳՅԻՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ԾՆՈՂՆԵՐՆ ԱՆՀԱՅՑ ԵՆ

Հայաստանի Հանրապետությունում գտնվող երեխան, որի ծնողներն անհայտ են, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Ծնողներից մեկի կամ խնամակալի (հոգաբարձուի) գտնվելու դեպքում երեխայի քաղաքացիության հարցը կարգավորվում է սույն օրենքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 21. ԵՐԵՒԱՅԻ ՔԱՂԱՔԱԳՅԻՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ՆԿԱՏՍԱՄԲ ՆՇԱՆԱԿՎԱԾ Է ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. Քաղաքացիություն չունեցող երեխան, որի նկատմամբ նշանակված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների խնամակալություն կամ հոգաբարձություն, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

2. Քաղաքացիություն չունեցող երեխան, որի խնամակալ (հոգաբարձու) նշանակված ամուսիններից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

3. Քաղաքացիություն չունեցող երեխան, որի խնամակալ (հոգաբարձու) նշանակված ամուսիններից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն,

եթե

1) առկա է երեխայի խնամակալ (հոգաբարձու) նշանակված ամուսինների համաձայնությունը.

2) նա մշտապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող խնամակալ (հոգաբարձու) նշանակված ամուսնու համաձայնությունը:

4. Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող երեխան, որի նկատմամբ նշանակված է խնամակալություն կամ հոգաբարձություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ այնպիսի ամուսինների կողմից, որոնցից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ նրա ծնողների համաձայնության դեպքում, եթե նրանք զրկված չեն ծնողական իրավունքից:

ՀՈԴՎԱԾ 22. ԵՐԵՒԱՅԻ ՔԱՂԱՔԱԳՅԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ՈՐԻ ՆԿԱՏՍԱՄԲ ՆՇԱՆԱԿՎԱԾ Է ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹՅՈՒՆ

¹³ Տե՛ս Резолюции, принятые Генеральной Ассамблей на двадцать пятой сессии. 15 сентября -17 декабря 1970 года. Генеральная Ассамблея.официальные отчеты. Двадцать пятая сессия.-Нью-Йорк: Организация Объединенных Наций. 1971. С.151-155.

¹⁴ Տե՛ս Декларация Ревкома Азербайджана от 30 ноября 1920г. «О признании Нагорного Карабаха, Зангезура и Нахичевани составной частью Армянской ССР». Газ. « Коммунист» (на арм. яз.). Ереван, 7 декабря, 1920 г.

¹⁵ Տե՛ս Действующее международное право. Т. 1.- М.: Московский независимый институт международного права. 1996. С. 65 - 73.

¹⁶ Տե՛ս Вельяминов М. Эволюция принципа самоопределения народов. //Республика Абхазия. N125. 2007. 01-02 ноября.

ՍՈՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ժուռնալիստիկայի տեսության և պատմության ամբիոնի հայցորդ



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վերջին ժամանակներս տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ առաջընթացը հանգեցրեց նրան, որ այն դարձավ պետական կառավարման և միջազգային դիվանագիտության կարևոր գործոն: Կարելի է բաժանել այն տեսակետը, որ «21-րդ դարում տեղեկատվական պատերազմը միջազգային քաղաքականության իրականացման հիմնական միջոցն է, գերակայող գործոն քաղաքական, տնտեսական, հոգևոր իշխանության հասնելու համար:»¹

Եթե մի կողմ թողնենք Ի.Պանարինի՝ միջազգային քաղաքականությունում տեղեկատվական պատերազմի դերի չափազանցված գնահատականը, նրա նշանակությունը միջպետական հարաբերություններում դժվար է թերագնահատել: Իրականում միջպետական հարաբերությունները առաջնահերթորեն կարգավորվում են պետությունների շահերով և նրանց հետապնդած նպատակներով: Միաժամանակ տեղեկատվական պատերազմները որոշակիորեն «խմբագրում են» արտաքին քաղաքականության առաջնահերթությունը:

Արտաքին քաղաքական գործընթացները ցույց են տալիս, որ արդի պայմաններում տեղեկատվական պատերազմները անխուսափելի են, այնպես, ինչպես անխուսափելի են երկրների և ժողովուրդների միջև տնտեսական, քաղաքական և այլ հակամարտությունները:

Հայ իրականությունում արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար կարևորվում է հասարակության անդամների բարոյահոգեբանական պատրաստվածությունը: Այս խնդրում կարևոր դերակատարում ունի քաղաքական հրապարակախոսությունը:

Քաղաքական հրապարակախոսությունը կոչված է տեսական մակարդակով և փաստական

հարուստ նյութի ընդգրկմամբ հիմնավորել հայոց պատմության, մշակույթի, երկրի զարգացման փիլիսոփայությունը, աշխարհակարգավորման քաղաքական սեփական կոնցեպցիան: Այդ ամենը հնարավորություն կընձեռի հայ քաղաքական մըտքին մշակել բոլոր ճակատներում տեղեկատվական պայքարի ռազմավարությունը և մարտավարությունը:

Սակայն սխալ կլիներ պատկերացնել, թե սոսկ հրապարակախոսական տեսական մտավարժանքները կարող են հանգեցնել տեղեկատվական պատերազմում հաղթանակի: Հրապարակախոսությունը և նրա լսարանը՝ որպես մեկ միասնական գործընթացի բաղադրամաս, գործում նշանակություն կարող են ունենալ, եթե ապահովվի երկրի կենսագործունեության բոլոր ոլորտների՝ կրթության, գիտության, տնտեսության և մշակույթի առաջընթացը:

Ժամանակակից հասարակության համընդգրկուն տեղեկատվացումը, որը որոշում է աշխարհի պատկերը, հանգեցրեց նրան, որ ներկայումս սոցիալական առաջադիմության և մարդկային քաղաքակրթության կարևոր գործոն են դարձել մշակույթը և կրթությունը: Փաստորեն, ինտերնետի հնարավորության շնորհիվ տեղեկատվական ներթափանցման հնարավորության ընդլայնումը կամաց-կամաց փոփոխում է մարդու փոխգործողությունը շրջակա միջավայրի (բնություն, սոցիալական, մշակութային և այլն) հետ: Կենդանի շփումը, որը բնորոշ է տեղեկատվության ավանդական փոխանցման ձևին, գալիս է փոխարինելու վիրտուալ ձևը:

Անհատի ձևավորման և զարգացման կարևորագույն գործոններից մեկը, որը ապահովում է նրա հաջող գործունեության պայմանները,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դառնում է տեղեկատվության հոսքում կողմնորոշումը, տեղեկատվական ռեսուրսների օպերատիվ որոնումը և ակտիվ օգտագործումը:

Ուստի էապես փոփոխվում է նաև քաղաքական հրապարակախոսության դիմագիծը: Այն առավել չափով պետք է ուղղված լինի փաստերի և իրողությունների վերլուծականին, քանի որ արդի հասարակության անդամները աչքի են ընկնում խիստ տեղեկացվածությամբ:

Տեղեկատվական պատերազմում Հայաստանի դերակատարման հստակեցումը պահանջում է պարզաբանել, թե աշխարհաքաղաքական և տարածաշրջանային ինչպիսի պայմաններում են իրականացվում մեր երկրի արտաքին քաղաքական գործընթացները:

Վերջին տարիներին աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական խոշոր փոփոխությունները հանգեցրին Հարավային Կովկասում էական փոփոխությունների:

Սեփական ինքնության հաստատումը ամբողջ հետխորհրդային տարածաշրջանում հանգեցրին նոր ճանաչված կամ փաստացի գործող պետությունների ձևավորմանը:

Հարավային Կովկասում խորհրդային պետության փլուզումից հետո ստեղծվեց միանգամայն նոր աշխարհաքաղաքական իրավիճակ: Ձևավորվեց շահերի և հակադրությունների յուրատեսակ միահյուսում խոշոր և տարածքային տերությունների միջև: Առաջացավ միջազգային սուր մրցակցության և լարվածության պոտենցիալ օջախ, որը բացասաբար է ազդում Հարավկովկասյան տարածաշրջանի կայունության վրա:

Միջազգային լարվածության նման իրավիճակում տարածաշրջանի պետությունները փորձեցին լուծել տարիներ ի վեր կուտակված ազգամիջյան խնդիրները:

Սակայն այդպես էլ չհաղթահարվեցին տարածաշրջանի պետությունների միջև բախումները, որոնք կրում են ռազմաքաղաքական, միջպետական և ազգամիջյան բնույթ: Դրա հետևանքով ոչ կայուն և հակասական բնույթ ունի նորանկախ պետությունների քաղաքականությունը:

Դրությունը խորանում է նրանով, որ խոշոր պետությունները փորձում են իրենց ազդեցությունը տարածել, իսկ մյուսներն էլ՝ արդեն ձևավորված հնարավորությունները պահպանել ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջանում:

Տեղեկատվական պատերազմում վերջին երկու տասնամյակում Հայաստանի Հանրապետության հիմնական հակառակորդը Ադրբեջանն էր, իսկ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերջին 2-3 տարվա փորձերից հետո ուժգնացավ նաև Թուրքիայի հետ գաղափարաքաղաքական հակամարտությունը:

Եթե ադրբեջանական կողմը Հայաստանի հետ տեղեկատվական պատերազմում դիմում է պարզունակ այնպիսի գործողությունների, ինչպիսիք են հայկական կայքերի վնասագերծումը, դրանց ոչնչացումը կամ բովանդակության փոփոխումը, ապա Թուրքիան ընտրել է Հայաստանի դեմ գաղափարական քարոզչության՝ իր կարծիքով, նրբին եղանակ: Թուրք պետական գործիչներից ոմանք հանդես են գալիս Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման հայտարարություններով, իսկ ոմանք էլ՝ կոշտ դիրքորոշման դրսևորմամբ:

Միջազգային հասարակությունը և հատկապես գերտերությունները քաջ գիտակցում են թուրքական քաղաքական խաղերի էությունը, սակայն գերադասում են աչք փակել այդ իրողության վրա:

Այս խնդրում հետևողական չէ նաև հայ քաղաքական հրապարակախոսության դիրքորոշումը, որը հիմնականում որդեգրել է հակաթուրքական զգուշավոր քարոզչության մարտավարությունը:

Արտաքին քաղաքական հիմնախնդիրներից կարևորագույնը Հայաստանի համար մնում է Ղարաբաղյան հիմնախնդրի հանգուցալուծումը:

Ադրբեջանի և Հայաստանի միջև հակամարտության հիմքում ընկած են տարածքային վեճը, պատմամշակութային մրցակցությունը և ազգամիջյան անհանդուրժողականությունը:

Հայկական քաղաքական հրապարակախոսությունում այս հակամարտության լուծման գործում առաջնայնությունը տրվում է հայ ազգաբնակչության անվտանգության ապահովմանը և ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացմանը, որը հիմնավոր է պատմական և մարդասիրական տեսանկյունից:

Ադրբեջանական քարոզչությունում գլխավորը յոթ տասնամյակ առաջ հայկական բռնադատված տարածքները վերադարձնելու խնդիրն է:

Ադրբեջանական հրապարակախոսական բնույթի նյութերին թեթևակի ծանոթացումը բերում է այն համոզման, որ անկախ քաղաքական և կու-

սակցական կողմնորոշումից, նրանցում գերիշխում են միասնական հակահայկական տրամադրությունները:

Հայ քաղաքական հրապարակախոսությունում դրսևորվում է հաճախ անհիմն հանդուրժողականություն: Պատշաճ հետևողականությամբ չեն մերկացվում ադրբեջանական ռազմատենչ քարոզչությունը: Երբեմն տպագրվող նյութերում անհարկի խոսվում է ազատագրված տարածքները Ադրբեջանին հանձնելու մասին:

Նկատելի է, որ Ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ հրապարակախոսական բնույթի նյութեր ամենից հաճախ տպագրում են «Հայաստանի Հանրապետություն» և «Նովոյե վրեմյա» թերթերը:

«Նովոյե վրեմյա» թերթը հաճախակի է անդրադառնում Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման խնդրին, տպագրելով հարցազրույցներ, ծավալուն հոդվածներ և այլն: Հրապարակախոս Ս. Ջուլյանը Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացում առաջնային է համարում հակամարտող կողմերի միջև փոխվստահության առաջացումը:

Հեղինակը ընդգծում է, որ այդ նպատակին հասնելու համար կան որոշակի նախադրյալներ, քանի որ հրադադարի ռեժիմը, լավ թե վատ, գործում է առանց միջազգային դիտորդների և խաղաղար ուժերի միջամտության: Այսինքն, չնայած ադրբեջանական կողմի ռազմատենչ հայտարարություններին, հակառակորդը նույնպես գիտակցում է ռազմանակ գործողությունների ծավալման կործանարար նշանակությունը:

Ս. Ջուլյանը հիմնավորում է այն միտքը, որ բանակցային գործընթացին Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը կարող է հանգեցնել հիմնախնդրի դրական լուծմանը:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցում հայկական կողմի կառուցողական դիրքորոշումը հակադրվում է ադրբեջանականի ռազմատենչ հայտարարություններին: Հեռատեսորեն Հայաստանը, ի հակադրություն ադրբեջանականի, ընդգծում է, որ Ադրբեջանի հետ հակամարտությունը ամենևին չի կրում կրոնական բնույթ: Մինչդեռ Ադրբեջանին հաջողվում է իսլամական բոլոր կոնֆերանսներում հակահայկական բնույթի բանաձևեր պարտադրել: Ակամա մտաբերում ես Ս. Հանդիկտոնի այն միտքը, որ «Քանի դեռ իսլամը

մնում է իսլամ, իսկ Արևմուտքը՝ Արևմուտք, այս երկու հզոր քաղաքակրթությունների միջև սկզբունքային հակամարտությունը կշարունակվի հետագա փոխհարաբերությունների այնպիսի ընթացքով, ինչպիսին դրանք եղել են անցած 14 հարյուրամյակներում»²:

Ադրբեջանի ապատեղեկատվական աշխատանքը Ղարաբաղյան հիմնահարցի շուրջը ունի երկակի ուղղվածություն: Նախ՝ երկրում սրել հակահայ տրամադրությունները և դրա հիման վրա միավորել հասարակայնությանը: Արտաքին ապատեղեկատվությունը նպատակ է հետապնդում համաշխարհային կարծիքը ձևավորել հայկական ագրեսիայից տուժած ադրբեջանական դրական իմիջի ստեղծմամբ:

Հակահայկական գործողությունները ամենօրյա բնույթ են կրում և դարձել են ադրբեջանական քարոզչական մեքենայի կարևոր մասը: Հարկ է ընդգծել, որ ադրբեջանցիները իրենց ապատեղեկատվական գործողություններում հասել են որոշակի հաջողությունների, ինչը վկայում է միջազգային տարբեր առյուծներում ոչ հայանպաստ բանաձևերի ընդունումը:

Ադրբեջանական կողմը հակահայկական քարոզչությունում օգտագործում է նաև եվրոպական երկրներում ադրբեջանական համայնքների հնարավորությունները: Բրյուսելում լույս է տեսնում «Եվրոխաբար» («Euroxeber») թերթը, Մոսկվայում՝ «Ազեռոս» և «Ազերբայջանսկի կոնգրես» թերթերը, Փարիզում «Լե Պոն-Մոստ» ամսագիրը և այլն, որոնք հակահայկական քարոզչություն են իրականացնում, տպագրելով ոչ միայն ադրբեջանցի հեղինակների, այլև իրենց պատվերով գրված այլազգի հրապարակախոսների նյութերը:

Այդ ֆոնի վրա շատ դժգույն է տեղեկատվական պատերազմում հայ քաղաքական հրապարակախոսության գործունեությունը: Դեռևս հստակեցված չեն տեղեկատվական պատերազմում հայկական կողմի գործելակերպի մեթոդները և եղանակները:

Հայաստանի Հանրապետության պարբերականներում հրապարակախոսական նյութերը կրում են ոչ թե հարձակողական, այլ ընդամենը հակառակորդի քարոզչությունը հերքելու բնույթ:

Գրեթե չի օգտագործվում սփյուռքի մտավոր ներուժը քաղաքական հրապարակախոսության և հակառակորդ կողմի դեմ հակաքարոզչու-

թյունում:

Հայ քաղաքական հրապարակախոսությունում նոր երևույթ է ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ առնչվող հիմնահարցերի քննությունը: Այն փաստորեն տնտեսական հիմնախնդրի հետ միասին դառնում է նաև Հայաստանի Հանրապետության միջազգային քաղաքականության լուսաբանման կարևոր ուղղություններից մեկը: Այս ոլորտում հրապարակախոսները իրենց գործունեությունում գրական ընդունակությունները զուգակցում են տնտեսագետ վերլուծաբանների հատկանիշների հետ: Նրանք կարողանում են բացահայտել երկրի տնտեսական զարգացման նոր միտումները և կանխատեսել հետագա հեռանկարները:

Կարևոր է նաև, որ նրանք իրենց շարադրանքը ներկայացնեն հանրությանը համոզիչ փաստարկումներով, որը հնարավորություն է տալիս ընդլայնել ընթերցողների լսարանը:

Հասարակության շրջանում առանձնակի հետաքրքրություն են առաջացնում հատկապես այն նյութերը, որոնք փորձում են բացահայտել համաշխարհային տնտեսական գործընթացները և նրա հետ առնչվող ճգնաժամը:

Մասնագետները ընդգծում են, որ Հայաստանում ֆինանսատնտեսական ճգնաժամը կապված է ոչ թե ներքին հիմնախնդիրների, այլ ԱՊՀ-ի երկրներ Հայաստանի արտադրանքի ծավալների նվազմամբ: Մյուս հանգամանքը Ռուսաստանից մեր հանրապետություն փոխանցվող գումարների կրճատումն է:

Հարկ է ընդգծել, որ վերջին տարիներին Հայաստանի տնտեսությունը վերընթաց զարգացում էր ապրում, որը պայմանավորված էր շինարարության հսկայական աճով: Բավական է ասել, որ այդ շրջանում շինարարությունը կազմում էր ներքին համախառն արտադրանքի 30 տոկոսը:

Արտաքին ֆինանսական ներարկումների խիստ կրճատումը Հայաստանի Հանրապետության տնտեսության հետագա զարգացումը դարձնում է խիստ անորոշ:

Ճշմարիտ է, գլոբալիզացիայի բացասական ազդեցությունը մեր հանրապետությունում այնքան էլ ուժեղ չէ, քանի որ մեր պետությունը այնքան էլ ներգրավված չէ ինտեգրացիոն պրոցեսներում: Այնուամենայնիվ գործազրկությունը Հայաստանում շարունակ աճում է:

Ժամանակակից աշխարհը դառնում է ավել-

լի փոխկապակցված, նախադրյալներ են ստեղծվում ժողովուրդների փոխհամագործակցության խորացման համար:

Չարգացման ավելի բարձր աստիճանում գտնվող ժողովուրդները փորձում են օբյեկտիվորեն գնահատել անցյալը և ներկայիս իրողությունները, նրանցում նշմարվող նեգատիվ երևույթներին տալ ճշմարտացի գնահատական: Այն հանգեցնում է քաղաքակրթական ինքնագիտակցության աճին՝ միաժամանակ ամենևին չսքողելով միջքաղաքակրթական տարբերությունները:

Ճշմարտացի է այն մոտեցումը, որ պատմությունը միշտ էլ եղել է փաստարկ քաղաքական վիճաբանությունում: Միևնույն իրադարձությունները ամեն երկիր և քաղաքական ուժ գնահատում է յուրովի: Սակայն ներկայումս գոյություն ունեն ժամանակի մարտահրավերներ: Գլխավորը պատմական փաստերի օբյեկտիվ գնահատականն է, տարբեր ժողովուրդների մոտեցումները հաշվի առնելը:

Հայ հասարակայնությունը առանձնապես զգայուն է ցեղասպանության համաշխարհային ճանաչման հետ առնչվող հարցերի քննության խնդրում: Այն հատկապես կարևորվում է համայն հայության բարոյահոգեբանական միավորման տեսակետից:

Փաստ է, որ սփյուռքում զգալիորեն նվազել է հայության համախմբումը Հայ Առաքելական Եկեղեցու շուրջը, քանի որ այն պառակտված է երկու մասի: Բացասական դեր են խաղում նաև հայության տարբեր հատվածների կրոնական տարատեսակ կողմնորոշումները:

Ազգը միավորելու իրենց կարողությունները նվազեցրել են նաև սփյուռքի քաղաքական կուսակցությունները:

Սփյուռքահայությանը Հայաստանի հետ կապելու փորձեր են կատարում հայկական ՋԼՄ-ները:

Սակայն ներկայումս հայության տարբեր հատվածների միավորման առաջնային գործոն է դարձել Հայոց Մեծ Եղեռնի համընդհանուր ճանաչման համար պայքարի ծավալումը:

Հայաստանի Հանրապետությունը և սփյուռքը, ըստ էության, ներգրավված են ցեղասպանության և Լեռնային Ղարաբաղի հանրապետության ճանաչման համատեքստում: Խնդիրը այնքան ընդգրկում է, որ մեր հանրությունը վեր է ածվում տեղեկատվական պատերազմների սուբյեկ-

տի: Յեղասպանության միջազգային ճանաչման խնդրում առավել ակնհայտ տեղեկատվական հասկանալիությունը Թուրքիայի հետ է, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի խնդրում՝ Ադրբեջանի:

Թուրքիան, օգտագործելով հնարավոր բոլոր միջոցները, փորձում է կանխել տարբեր պետությունների կողմից Յեղասպանության ճանաչման գործընթացը:

Եղեռնի թեման՝ որպես կենտրոնական հարց, գտնվում է սփյուռքահայ պարբերականների ուշադրության կենտրոնում: Հայաստանի Հանրապետությունում, սովորաբար, այդ թեմային անդրադառնում են ապրիլի 24-ի կապակցությամբ:

Ուշագրավ է «Իտալացին և մեծ եղեռնը», հրապարակախոսական գրախոսությունը, ուր ներկայացված է հայերին և Հայաստանին վերաբերող երեք գրքերի հեղինակ Ջ. Գուայտայի «Ճիշ Արարատից», «Արմին Վեզները» և «Հայերի ցեղասպանությունը» գիրք-ալբոմը: «Հայաստանի Հանրապետություն» թերթը մեջբերում է իտալացու խոսքերը, որ եղեռնը «հանցագործություն է մարդկանց և նաև իմ հանդեպ»³:

Այս նույն թեման արծածվում է թերթի մեկ ուրիշ հրապարակման մեջ՝ արտատպելով Ստամբուլի «Մարմարա» օրաթերթի հրապարակումը, որտեղ տպագրված էր թուրքահայ թերթի խմբագրի քաղաքական բնույթի հարցազրույցը հայաստանցի տնտեսագետի հետ: Հոդվածը եզրափակվում է հետևյալ դատողությամբ. «Թուրքիայի կառավարությունը պետք է ուժ գտնի ընդունելու 1915 թ. եղեռնը»⁴:

Նկատի ունենալով թուրքական և ադրբեջանական քարոզչամիջոցների հակազդեցությունը այս խնդրում՝ հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը խթանելու համար հարկ է օգտագործել սփյուռքի կազմակերպությունների և ՋԼՄ-ների ողջ ներուժը: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության քաղաքական հրապարակախոսությունը գործում է մեկուսի:

Հայկական հասարակության կողմից ինքնաճանաչման ճգնաժամը ներկայումս հաղթահարվում է գլխավորապես էթնիկական նույնականացմամբ: Այս իմաստով առանձնահատուկ նշանակություն ունի հայրենիք-սփյուռք կապերի սերտացումը:

Հայաստանի Հանրապետությունում սփյուռքի հետ առնչվող խնդիրները այնքան հու-

զական են, որ դարձել են Հայաստանում հասարակական երկխոսության հաստատման կարևոր ազդակներից մեկը: Հայրենիք-սփյուռք կապի ամրապնդման հիմնախնդիրը կարևոր տեղ է զբաղեցնում հայաստանյան քաղաքական հրապարակախոսության մեջ:

Անկախ քաղաքական դիրքորոշումից, հրապարակախոսները միասնական տեսակետ են մշակել Սփյուռք-Հայաստան կապերի ամրապնդման գործում:

Հայաստանի Հանրապետության քաղաքական հրապարակախոսությունում հնչում է այն գաղափարը, որ սփյուռքի հետ առնչվող խնդիրներում անհրաժեշտ է մշակել հստակ պետական գաղափարախոսություն և գործելակերպ: Այն ստիպում է խորությամբ ուսումնասիրել սփյուռքի ձևավորման բուն գործընթացը, նրա զարգացումը և գործունեության մեխանիզմը:

Թերևս այդ նպատակի իրականացմանն է ուղղված նորաստեղծ սփյուռքի նախարարությունը:

Սփյուռքի ֆեռմենտի բացատրության գործում նշանակալից է ամերիկացի գիտնական Մաֆրանիի տեսակետը, որը գերծ չէ նաև վիճահարույց կողմերից⁵: Ըստ նրա սփյուռքի համար կարևոր է այն գիտակցությունը, որ նա բնակվում է «իր երկրի սահմաններից դուրս», օտարի զգացումը նոր տեղում: Առաջնային նշանակություն ունի նաև «պատմական հիանալի հայրենիքի» առասպելը, երազանքը՝ վերադառնալու պատմական հայրենիք:

Այդ իմաստով հայության համար կարևորվում է նաև պատմական հայրենիք վերադառնալու երազանքը, մշտական կապը նրա հետ, հայրենիքի նկատմամբ վերաբերմունքը որպես էթնոսի և համերաշխության խորհրդանիշ:

Գլոբալիզացիան և մեծ պետությունների քայքայումը հրատապ դարձրին բազմաթիվ սփյուռքների իրավական և փաստացի ճանաչումը: Այդ իսկ պատճառով կարևոր է ժամանակակից սփյուռքները տարբերակել պատմական հայրենիքի ունեցած կարգավիճակով, պատմական հայրենիքում ունեցած դիրքով, սփյուռքում ունեցած կարգավիճակով:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Գրաֆիկական առումով այն ներկայացնում է հետևյալ պատկերը.

Պատմական հայրենիքի կարգավիճակով	Պատմական հայրենիքում ունեցած դիրքով	Սփյուռքում ունեցած կարգավիճակով
1. Էթնիկական միասնական սփյուռք 2. Սփյուռք՝ միասնական պատմական հայրենիքով 3. Բազմաքանակ համայնք՝ առանց միասնական պատմական հայրենիքի	1. «Էնդոսփյուռք», որոնք մեկնել են երկրից մշտական բնակչության 2. Երբևէ չեն բնակվել պատմական հայրենիքում	1. Սփյուռքի անդամները 2. Կազմակերպված խումբը 3. Խմբակցություն (հայրենակցական միություն) 4. Սփյուռքի անդամները «միասնական ազգային օջախով»

Նման պարագայում էապես կփոխվի նաև քաղաքական հրապարակախոսության դիմագիծը, որը զգացմունքային նախասկզբից անցում կկատարի դեպի առավելապես բանականը:

Հայաստանի հասարակության լայն շրջաններում զգալի հետաքրքրություն է առաջացնում յուրաքանչյուր տարի անցկացվող սփյուռքի ուսուցիչների՝ մայր հայրենիքում վերապատրաստման գործընթացը:

Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումը թելադրված է ոչ միայն սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդման, այլև արտասահմանում աշխատող հայ ուսուցիչների մասնագիտական որակավորման և ընդհանուր մշակույթի բարձրացման անհրաժեշտությամբ:

Բարձրակարգ ուսուցչական կադրերի առկայությունը սփյուռքի հայկական դպրոցներում կնպաստի սփյուռքահայ երիտասարդության՝ իրենց բնակության երկրների լիարժեք քաղաքացիներ ձևավորելու գործին:

Հայաստանյան հրապարակախոսական նյութերում ավելի շատ նյութեր են տպագրվում հեռավոր սփյուռքի, քան Ռուսաստանի հայկական սփյուռքի վերաբերյալ:

Ռուսաստանի հայ համայնքի կյանքը լուսաբանող նյութերը ունեն առավելապես քննադատական բնույթ: Այսպես, ընդգծվում է, որ Ռուսաստանում հայերի ճնշող մեծամասնությունը ապրում է անձնական հոգսերով: Փոքրաթիվ հայկական խմբավորումներն էլ սովորաբար ձգտում են միայն պաշտպանելու սովորական և հարմարավետ միկրոմիջավայրը:

Ռուսաստանում գործող հայկական ընդամենը մի քանի տասնյակ հասարակական կազմակերպությունները չունեն հասարակական լուրջ դե-

րակատարում:

Սակայն մաշտաբային առումով նկատելի է սփյուռքահայության հասարակական կյանքի աշխուժացումը: Այս պարագայում դրսևորվում են նաև տարատեսակ մոտեցումներ և ձևավորվում այլևայլ մտայնություն: Օրինակ՝ ոմանք պնդում են, թե իբր սփյուռքը և Հայաստանի Հանրապետությունը ունեն տարատեսակ նպատակներ: Նման դիրքորոշման դեպքում ճեղքվածք կառաջանա հայության տարբեր հատվածների միջև:

Դատապարտելի է նաև սփյուռքում առանձին անձանց կողմից հնչող այն տեսակետը, թե պետք է ստեղծել սեփական պառլամենտը: Համայն հայության կենտրոնը եղել և մնում է Հայաստանի Հանրապետությունը: Դրանով իսկ մեծանում է Հայաստանի Հանրապետություն դերը և պատասխանատվությունը, անկախ աշխարհաքաղաքական իրավիճակից, համայն հայության շահերի պաշտպանության գործում:

Դրա համար անհրաժեշտ է մտահոգվել հայությանը հանրապետությունում և սփյուռքում համախմբված հանրություն ձևավորելու համար:

Ամփոփելով ասենք, որ տեղեկատվական պատերազմում Հայաստանի Հանրապետությունը չունի հստակ դիրքորոշում, մշակված ռազմավարություն և փաստացիորեն զիջում է ադրբեջանական և թուրք քարոզչությանը: Վերջիններս հակահայկական քարոզչությունում ներդրում են հսկայական նյութական միջոցներ և մտավոր ներուժ:

Հայաստանի Հանրապետությունում հասարակական տարբեր ուժեր և քաղաքական կուսակցություններ միասնական տեսակետ չեն դրսևորում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հնարավոր լուծման ուղիների վերաբերյալ: Մինչդեռ ասենք, Ադրբեջանում այս խնդրի նկատմամբ մշակվել է

միասնական մոտեցում և ակտիվորեն քարոզվում է անզիջում, հակահայկական տեսակետ:

Հանրապետությունում կրքեր են բորբոքվում պետության արտաքին քաղաքականության կողմնորոշիչների վերաբերյալ, որոնք հաճախ հանգում են արևմտամետների և ռուսամետների՝ միմյանց նկատմամբ փոխադարձ մեղադրանքներ առաջադրելով: Դրանով իսկ հասարակական գիտակցության մեջ ամրագրված է այն տեսակետը, թե իբր Հայաստանի Հանրապետությունը ի վիճակի չէ վարելու ինքնուրույն արտաքին քաղաքականություն, այլ պարտադրված է իրականացնել առնվազն կոմպլեմենտար մոտեցում՝ խուսանավելով գերտերությունների միջև:

Միանշանակ չէ նաև հասարակական տարբեր ուժերի վերաբերմունքը սփյուռքի նկատմամբ:

Ոմանք պնդում են, թե սփյուռքահայերը պետք է օժտված լինեն այն նույն իրավունքներով, ինչ հանրապետության քաղաքացիները: Մի զգալի մասն էլ սփյուռքի հետ համագործակցությունը տեսնում է ոչ թե քաղաքական, այլ մշակութային, տնտեսական ոլորտներում:

Ամփոփելով ասենք, որ Հայաստանի Հանրապետության քաղաքական հրապարակախոսությունը առաջնային խնդիր պետք է համարի հայ ժողովրդի բոլոր հատվածների միավորումը այնպիսի հիմնարար գաղափարների շուրջը, ինչպիսիք են Արցախի ինքնորոշման ճանաչումը և նրա վերամիավորումը մայր հայրենիքի հետ, Եղեռնի միջազգային ճանաչումը և Սփյուռք-Հայաստան կապերի սերտացումը: Այդ են պահանջում ազգի համընդհանուր շահը և զարգացման հեռանկարները:

¹ Տե՛ս Փանարին Ի. Информационная война и геополитика. М., 2006. С. 6.

² Տե՛ս Хантингтон С. Столкновение цивилизаций, пер. Т. Велимеева, Ю. Новикова. М., 2003. С. 331.

³ Տե՛ս «Հայաստանի հանրապետություն», 16 դեկտեմբերի, 2005թ.:

⁴ Տե՛ս «Հայաստանի հանրապետություն», 11 հոկտեմբերի, 2005թ.:

⁵ Տե՛ս Փանարին Ի. Информационная война и геополитика. М., 2006. С. 6.

ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության ՓՔ վարչության ավագ փորձագետ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՕԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԸ

Հանցակազմը, որպես որոշակի տեսակի հանցագործությունների հասկացության գիտական վերացարկում, իր մեջ ընդգրկում է այդ հանցագործությունների առավել էական ու բնութագրական հատկանիշների համակցությունը¹: Հանցակազմի հիմնական նշանակությունն այն է, որ բավարար հիմք է ստեղծվում հավաստելու հանցագործության (կոնկրետ դեպքում հափշտակության) առկայության փաստը: Արարքը հանցագործություն է, եթե այն իր մեջ բովանդակում է հանցակազմի բոլոր տարրերն ու հատկանիշները: Անձի արարքում որոշակի հանցակազմի առկայության հավաստումը հիմք է հանդիսանում այդ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Հափշտակության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա հիմնական բնորոշումներն իրենց մեջ ընդգրկում են արարքի հետևյալ վեց հիմնական հատկանիշները՝

- 1) գույքի պատկանելիությունն ուրիշին,
- 2) գույքը վերցնելը և (կամ) հանցավորի կամ այլ անձանց օգտին դարձնելը,
- 3) ապօրինությունը,
- 4) անհատույց լինելը,
- 5) սեփականատիրոջը կամ գույքը տիրապետող այլ անձին վնաս պատճառելը և
- 6) շահադիտական նպատակը:

Հափշտակության օբյեկտիվ կողմը բնորոշող առաջին հատկանիշը համարվում է՝ «ուրիշի գույքը վերցնելը և (կամ) հանցավորի կամ այլ անձանց օգտին դարձնելը»: Ուրիշին պատկանող գույքը վերցնելը և (կամ) հանցավորի կամ այլ անձանց օգտին դարձնելն իրենից ներկայացնում է արարք, այն է՝ գործողություն: Արարքը միշտ հանդես է գալիս որպես որոշակի մարդու հանրորեն վտանգավոր կոնկրետ վարքագիծ, որն իրականացվում է որոշակի պայմաններում, տեղում և ժամանակահատվածում: Ընդ

որում, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հանցագործություն է համարում ոչ թե մարդու այնպիսի մտքերը կամ գաղափարները, որոնց իրականացումը կարող է վնաս պատճառել անձին, հասարակությանը և պետությանը, այլ միայն հանրորեն վտանգավոր այն արարքները (գործողությունը կամ անգործությունը), որոնք ոտնձգում են համապատասխան քրեաիրավական նորմերով պահպանվող հասարակական հարաբերությունների դեմ:

Իրավաբանական գրականության մեջ և դատական պրակտիկայում հափշտակությունների վերաբերյալ օգտագործվող տերմիններից առավել տարածվածը՝ «**ձեռք բերել**», «**յուրացնել**», «**տիրապետել**» (նաև՝ զավթել, տիրանալ, սեփականել²), «**վերցնել**» և «**դարձնել**» տերմիններն են: «**Ձեռք բերել**» և «**յուրացնել**» տերմինները բոլորովին չեն համապատասխանում հափշտակության հանցակազմի բնույթին: Դրանցից առաջինը, ըստ էության, իր մեջ ընդգրկում է գույքի ձեռքբերման այն փաստը, որն արդեն դուրս է բերվել պետական կամ հանրային ֆոնդերից, օրինակ՝ հափշտակված գույք գնելը և այլն, որը չափազանց ընդլայնում է «հափշտակություն» հասկացությունը: Իսկ երկրորդը փաստացի նախատեսում է հափշտակության միայն մասնավոր դեպքերը, դրա ձևերից միայն մեկը, որը չափազանց նեղացնում է վերջինիս սահմանները:

Ոչ այնքան հաջողված է համարվում «**տիրանալ**» տերմինը, որը նշանակում է՝ ա/ «**զավթել**», բ/ «**յուրացնել**», գ/ «**վերցնել խաբեությանը կամ ուժի գործադրմամբ**», դ/ «**ինչ-որ բան վերցնել լիարժեք տիրապետման ներքո**», ե/ «**դեպի իրենը գրավել, ինչ-որ բան իր ազդեցությանը ենթարկել**» և այլն: Նշված բնորոշումներից հետևում է, որ «**տիրանալ**» տերմինը չի ենթադրում համապատասխան ֆոնդերից գույքի մշտա-

www.lawinstitute.am

կան և պարտադիր դուրս բերում: Գրանց տիրապետումը հնարավոր է նաև որոշակի ժամանակահատվածով, որը հաճախ հանդիպում է ինքնիրավչության, պաշտոնեական դիրքի չարաշահման և այլ հանցակազմերում: Բացի դրանից, հափշտակություն հնարավոր է նաև այն դեպքերում, երբ հանցավորը գույքն անմիջականորեն չի տիրապետում, այլ փոխանցում է երրորդ անձանց:

Հափշտակությունն ամբողջությամբ չի բնորոշում նաև «վերցնել» տերմինը: Ընդհանուր առմամբ այն հասկացվում է ինչ-որ բանից «անջատում», «հեռացում»: Հափշտակությունների դեպքում իրապես տեղի է ունենում համապատասխան ֆոնդերից գույքի «անջատում», «հեռացում» կամ «վերցնելու» պրոցես: Սակայն դրանով հափշտակությունը չի ավարտվում: Այն պետք է վնաս պատճառի նաև նյութական բարիքների բաշխման հարաբերություններին: Օրինակի համար, «վերցնել» է համարվում նաև գույքի համապատասխան ֆոնդերից «անջատման» կամ «հեռացման» այն պրոցեսը, որը կատարվում է դրա ոչնչացման նպատակով և այլն: Հափշտակության բնորոշման մեջ միայն նշված տերմինի օգտագործումն էապես ընդլայնում է վերջինիս սահմանները:

Արարքն ամբողջությամբ չի բնորոշում նաև «դարձնել» տերմինը, որն, ըստ որոշ հեղինակների, իմաստային առումով համարժեք է «օգտագործել», «ինչ-որ բանով օգտվել» բառերին: «Դարձնել» տերմինն իր մեջ չի ներառում պետական կամ հանրային ֆոնդերից գույքի դուրս բերման պահը, չի մատնանշում հափշտակության առաջնային էտապը և չի նշում արտադրական հարաբերություններին վնաս պատճառելու փաստը: Այն միայն վկայում է արժեքներն առանձին անձանց օգտին դարձնելու, հափշտակության իրագործման և նյութական բարիքների բաշխման հարաբերություններին պատճառված վնասի մասին: Իրականում գույքից «օգտվելը», «օգտագործելը», առանձին անձանց «օգտին դարձնելը» հնարավոր է այն բանից հետո, երբ այն դուրս է բերվել պետական կամ հանրային ֆոնդերից: Օրինակ՝ հանցավորն իր օգտին է դարձնում հայտնաբերված կամ պատահաբար իր մոտ հայտնված նյութական արժեքը և այլն: Այդ իսկ պատճառով, հափշտակությունների

բնորոշման ժամանակ այդ տերմինի օգտագործումը կարող է առաջ բերել դիտարկվող հանցագործությունների լայնածավալ մեկնաբանման անհրաժեշտություն³:

Նշված տերմինների օգտագործմամբ հափշտակությունների բնորոշման նման անհաջող փորձերը բացատրվում են նրանով, որ դրանցից և ոչ մեկը (ինչպես նաև ցանկացած այլ տերմին), չի կարող տալ այդ բարդ երևույթի համապարփակ բնութագիրը, որն իր հերթին պայմանավորված է խախտվող հասարակական հարաբերությունների բարդությամբ: Այս հանգամանքի հետ կապված, իրավաբանական գրականության մեջ առաջարկվել է ընտրել հափշտակության օբյեկտիվ կողմը բնորոշող այնպիսի մի տերմին, որն իր մեջ կներառի «արտադրական և նյութական բարիքների բաշխման հարաբերությունների դեմ ուղղված արարքի» բնորոշումը: Սակայն վերևում նշված տերմիններից և ոչ մեկը չի բավարարում առաջարկվող պահանջներին, ուստի, դրա հետ կապված, անհրաժեշտություն է առաջանում միաժամանակ օգտագործել երկու տերմին, որոնք իրենց համակցության մեջ հափշտակությունը բնորոշում են ճիշտ իր բովանդակությանը համապատասխան:

Արարքի բնութագրման նպատակով, որը վնաս է պատճառում արտադրական հարաբերություններին, առավել ընդունելի է օգտագործել «վերցնել» տերմինը, քանի որ այն իրենից ներկայացնում է պետական կամ հանրային ֆոնդերից գույքը վերցնելու պրոցեսը, որն էլ համարվում է նաև հանրորեն վտանգավոր արարք: Դա պայմանավորված է նյութական բարիքների արտադրության հասարակական հարաբերությունների խախտման և սեփականությանը պատճառված վնասի փաստով: Գույքը վերցնելը համապատասխան ֆոնդերից իր մեջ ներառում է նաև հակաօրինական գործողություն, որն արգելված է քրեական օրենքով: Այն չպետք է պարտադիր համարել միայն հանցավորի համար: Այն կարող է իրականացվել նաև հանցավորից անմիջական ազդեցության ներքո գտնվող այլ անձի կողմից, օրինակ՝ անչափահասի կողմից:

Եթե հափշտակությունը ձևակերպենք որպես «գույքի հակաօրինական վերցնելը պետական կամ հանրային ֆոնդերից», ապա որպես այդպիսի հանցագործություն կարելի է ընդունել

գույքի ցանկացած վերցման փաստ: Դ-ա է պատճառը, որ նյութական բարիքների բաշխման հարաբերություններին վնաս պատճառող արարքի բնորոշման համար անհրաժեշտ է կիրառել մեկ այլ տերմին ևս, այն է՝ **«դարձներ»**: Այդ տերմինն ամբողջացնում և ընդգծում է այն հանգամանքը, որ վերցված գույքն օգտագործվում է ի շահ առանձին անձանց և առավել լայն կերպով է բնութագրում արարքը հափշտակության դեպքում: **«Վերցնել»** և **«դարձնել»** տերմիններն իրենց համակցության մեջ արարքը բնորոշում են ճիշտ իր բովանդակությանը համապատասխան: Դ-ա կարևորվում է նրանով, որ նշված տերմինները, մեկը մյուսին լրացնելով, նեղացնում են իրենց իմաստային նշանակությունը հափշտակության շրջանակներում: Այսպես, օրինակ, «պետական կամ հանրային ֆոնդերից գույքը հակաօրինական վերցնելը» կարող է հանդես գալ ոչ միայն հափշտակությունների դեպքում: Սակայն, երբ խոսքը վերաբերում է ինչ-որ մեկի օգտին գույքը վերցնելուն, ապա այն սահմանափակում է հասկացության բովանդակությունը, քանի որ այդ դեպքում գույքը վերցնելու ոչ բոլոր դեպքերն են, որ բնորոշ են հափշտակություններին, այլ միայն նրանք, որոնք ուղեկցվում են նյութական արժեքներն առանձին անձանց օգտին դարձնելու փաստով⁴, այլ կերպ ասած՝ «Անձին հափշտակություն կատարելու մեջ հնարավոր է մեղադրել միայն այն դեպքում, եթե նա գույքը վերցրել է իր կամ այլ անձանց օգտին դարձնելու նպատակով»⁵: Հանդիպում են նաև դեպքեր, երբ հափշտակության հանցակազմի օբյեկտիվ կողմը նկարագրելիս, հատկապես հափշտակության բնորոշման մեջ, արտահայտվում են այլ տերմիններ, մասնավորապես՝ **«վերցնելը»** և **«բռնազավթելը»**, **«վերցնելը»** և **«սեփականությունը դարձնելը»**, **«դուրս բերումը»** և **«դարձնելը»** և այլն, որոնք բոլորն էլ բնորոշում են հափշտակության օբյեկտիվ կողմը⁶:

Իրավաբանական գրականության մեջ խիստ քննադատության է ենթարկվել նաև հափշտակությունների բնորոշման մեջ տեղ գտած՝ **«հանցավորի կամ այլ անձանց օգտին»** ձևակերպումը և պատճառաբանվել նրանով, որ նշված բառերը նախ և առաջ չեն սահմանազատում ուրիշից հափշտակված կամ ժամանակավորապես փոխառված գույքի տարբերությունը, քանի որ

վերջինիս դեպքում այն նույնպես անցնում է **«հանցավորի կամ այլ անձանց օգտին»**: Բացի այդ, «այլ անձանց» բառերը համարվում են ավելորդ և անիմաստ, քանի որ հափշտակության դեպքում միևնույն է, թե ով կստանա «օգուտ»՝ անձը, որն անմիջապես հափշտակել է ուրիշի գույքը, թե՛ այլ անձինք⁷: Հարկ է նկատել, որ նշված տեսակետը գուրկ չէ բավարար հիմքերից և խնդրո առարկայի կարևորությունից ելնելով, արժանի է առանձնակի ուշադրության: Ուրիշի գույքը հանցավորի կամ այլ անձի օգտին դարձնելը, եթե դրան չի գուգորդում գույքի բռնազավթում, ապա տեղի է ունենում գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետող այլ անձի կողմից գույքի կամավոր փոխանցում հանցավորի կամ այլ անձանց տիրապետմանը: Այսինքն՝ սեփականատիրոջից կամ գույքը տիրապետող այլ անձից գույքի փոխանցումը հանցավորին կատարվում է կամավոր, ընդ որում, **խարդախության դեպքում**՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով, իսկ **յուրացման կամ վատնման դեպքում**՝ սեփականատիրոջ կամ գույքը տիրապետող այլ անձանց և հանցանք կատարած անձի միջև գոյություն ունեցող իրավահարաբերությունների ուժով:

Քրեական օրենսդրությունը, կախված հանցագործության կատարման եղանակից, հատուկ տարբերակելով հափշտակությունների վերաբերյալ նախատեսվող պատասխանատվության տեսակները, առանձին հողվածներով առանձնացնում և ամրագրում է հափշտակության հետևյալ ձևերը՝

- 1) գողություն,
- 2) խարդախություն,
- 3) յուրացում կամ վատնում,
- 4) կողոպուտ,
- 5) ավազակություն և այլն:

Սեփականության դեմ ուղղված նշված ոտնձգությունները միմյանցից էապես տարբերվում են իրենց կատարման եղանակով: Բացառություն են կազմում միայն «Պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաներ կամ փաստաթղթեր հափշտակելու» (ՀՀ քր. օր-ի 180 հոդված) և «Հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ» (ՀՀ քր. օր-ի 181 հոդված) հանցակազմերը: Նշված

հանցակազմերի դիսպոզիցիան որևէ կերպ չի պարզաբանում, թե նշված արարքների կատարումը հափշտակության կոնկրետ որ ձևով է ենթակա կատարման, այսինքն՝ կարելի է մեկնաբանել որպես գույքի հափշտակություն՝ **«անկախ հափշտակության կատարման եղանակից»**: Սակայն դա բոլորովին էլ չի նշանակում, որ գույքի հափշտակությունը կարող է կատարվել ցանկացած այնպիսի մի եղանակով, որը բացարձակ հայտնի չէ քրեական օրենսդրությանը:

Վ. Ն. Կուդրյավցևը, ելնելով հանցակազմերի միջև գոյություն ունեցող սահմանազատող հատկանիշների քանակից, առանձնացնում է երեք հիմնական դեպքեր.

1) երբ հանցակազմերի միջև ընդհանուր հատկանիշները, բացի տարիքից և մեղսունակությունից, բացակայում են,

2) երբ հանցակազմերն ունեն քիչ քանակությամբ ընդհանուր հատկանիշներ:

Նման հարաբերակցության մեջ են գտնվում, օրինակ՝ գողության (հոդված 177) և երեխայի առքուվաճառքի (հոդված 168) կամ մարդուն առևանգելու (հոդված 131) հանցակազմերը: Նշված հանցագործությունների օբյեկտները տարբեր են՝ մի դեպքում հանդես է գալիս **սեփականությունը**, իսկ մեկ այլ դեպքում՝ **ընտանիքի և երեխայի շահերն ու անձի ազատությունը**: Հիմնականում տարբերվում են նաև սուբյեկտները (ըստ տարիքի): Մասամբ համընկնում են միայն գործողությունների եղանակը՝ «հափշտակությունը» և «առքուվաճառքը» կամ «առևանգելը», ինչպես նաև մեղքի ձևը՝ դիտավորությամբ կատարելը: Սակայն մնացած հատկանիշները տարբերվում են ըստ ոտնձգության առարկայի և սուբյեկտիվ կողմի: Նման պարագայում հանցակազմերի սահմանազատումը միմյանցից դժվարություն չի ներկայացնում և այն կարող է իրականացվել մի շարք հատկանիշների միջոցով: Բացի այդ, նշված հանցակազմերի մեծ մասն ունեն տարբեր կառուցվածքներ,

3) երբ հանցակազմերն ունեն բոլոր ընդհանուր հատկանիշները, բացի մեկից:

Տվյալ դեպքում միայն այդ հատկանիշն ունի սահմանազատող նշանակություն: Այդպիսի հանցագործությունները կարելի է բառի իսկական իմաստով անվանել **«հարակից»**, քանզի վերջիններիս կառուցվածքը սովորաբար լինում է

միանման: Այսպես օրինակ՝ գողությունը տարբերվում է կողոպուտից միայն գործողության եղանակով, իսկ կողոպուտի հասարակ տեսակը կողոպուտի որակյալ տեսակից՝ մեկ համարժեք հատկանիշով և այլն⁸:

Օբյեկտիվ կողմի վերջնական սահմանազատման համար Վ. Ն. Կուդրյավցևն առաջարկում է երեք հիմնական հարցերի պարզաբանում՝ ա/ եղե՞լ է արդյոք գույքի հափշտակում պաշտոնեական դիրքն օգտագործելու միջոցով կամ առանց դրա, բ/ եթե ոչ, ապա այն գաղտնի՞ է կատարվել, թե՞ բացահայտ, գ/ եթե կատարվել է բացահայտ, ապա բռնություն գործադրվե՞լ է, թե՞ ոչ, եթե գործադրվել է, ապա ինչպիսի՞, թե՞ կատարվել է առանց բռնություն գործադրելու: Պատկերացնենք, որ գույքի հափշտակումն իրականացվել է առանց պաշտոնեական դիրքն օգտագործելու և գաղտնի: Հետևաբար արարքը ենթակա է որակման որպես գողություն⁹:

Հափշտակության օբյեկտիվ կողմին վերաբերող երկրորդ հատկանիշը հանդիսանում է ուրիշի գույքն **անօրինական վերցնելը և (կամ) իր կամ այլ անձանց օգտին դարձնելը**: **«Անօրինականությունը»** կամ այսպես կոչված **«հակաօրինականությունը»**, հանդիսանում է հանրորեն վտանգավոր արարքի կարևոր սոցիալական հատկանիշը, որովհետև ինչքան էլ վտանգավոր լինի արարքը, այն չի կարող հանցագործություն համարվել, եթե նախատեսված չէ քրեական օրենքով:

Երբեմն իրավաբանական գրականության մեջ վստահված գույքի յուրացումը նշանակում է՝ **«օրինական տիրապետումից անցումը հակաօրինականի»**, որը երբեմն **անվանում են նաև գույքի «ֆորմալ բռնագրավում»**¹⁰: Անձը գույքը հափշտակելով, դրա նկատմամբ «հաստատում է գերիշխանություն»: Այդ իսկ պատճառով նա գույքը տնօրինում, տիրապետում և օգտագործում է ի սեփականություն, սակայն այն տարբերությամբ, որ գույքը հափշտակող անձն իրավաբանորեն չի հանդիսանում դրա սեփականատերը, քանի որ հնարավոր չէ սեփականության իրավունքի ձեռքբերումը հանցավոր ճանապարհով: Անկախ ամեն ինչից, տուժողը չի կորցնում իրենից հափշտակված գույքի նկատմամբ իր ունեցած սեփականության իրավունքը: Դա է պատճառը, որ իրավաբանական գրականության

մեջ հափշտակության վերաբերյալ տրվող բնորոշումների մեջ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված ուրիշի գույքը չի բնութագրվում իբրև հանցավորի սեփականություն, այլ բնութագրվում է որպես՝ «**ուրիշի գույքը հանցավորի կամ այլ անձանց օգտին դարձնելը**»: Միևնույն ժամանակ, նշվածը բոլորովին էլ չի նշանակում, որ հափշտակություն պետք է համարել ուրիշի գույքը շահադիտական նպատակներով ժամանակավորապես օգտագործումը: Այդ դեպքում արարքը պետք է որակվի խաբեության կամ վատահույունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու (ՀՀ քր. օր-ի 184 հոդված) կամ ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին առանց հափշտակելու նպատակի ապօրինաբար տիրանալու (ՀՀ քր. օր-ի 183 հոդված) համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածներով¹¹:

Հափշտակության օբյեկտիվ կողմին վերաբերող երրորդ հատկանիշը ուրիշի գույքն **անհատույց վերցնելն է**: Այն բնութագրվում է ուրիշին պատկանող գույքը հանցավորի կամ այլ անձանց օգտին վերցնելու կամ դարձնելու մեջ՝ առանց դրա համարժեքը փոխհատուցելու (մեղադրյալի մոտ բացակայում է պատճառված վնասը հետագայում հատուցելու մտադրությունը):

Եթե գույքը տիրանալու պրոցեսում սեփականատիրոջը տրամադրվում է համապատասխան փոխհատուցում, ապա այդպիսի գործողությունը չպետք է դիտել որպես հափշտակություն, քանի որ այդ գործողությունները գույքային վնաս չեն պատճառում (այսինքն՝ տեղի չի ունենում գույքային ֆոնդերի նվազում): Իսկ վերցված գույքի մասնակի փոխհատուցման դեպքում չի նշանակում, որ հափշտակության հանցակազմը բացակայում է: Այն կարող է հաշվի առնվել միայն հափշտակության որոշակի չափի առկայության դեպքում: Իսկ այն հարցի պարզումը, թե փոխհատուցումը համարժեք է եղել, թե՛ ոչ, որոշում է դատարանը՝ հիմնվելով գործի կոնկրետ հանգամանքների վրա՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով նաև տուժողի կարծիքը:

Հափշտակության հանցակազմի օբյեկտիվ կողմի վերջին չորրորդ հատկանիշը հանրորեն վտանգավոր հետևանքն է՝ **սեփականատիրոջը կամ գույքը տիրապետող այլ անձին պատ-**

ճառված վնասը: Վնաս պատճառելու տակ հասկացվում է այն նյութական վնասը, արտահայտված գույքի ընդհանուր արժեքի չափով, որը վերցվել (կամ դարձվել) է հանցավորի կամ այլ անձանց օգտին: Պատճառված վնասի մեջ չեն ընդգրկվում տվյալ գույքի օգտագործման արդյունքում բաց թողնված օգուտները:

Սակայն հափշտակության հետ կապված գործերով հանցագործությունները որակելու ընթացքում «**սեփականատիրոջը կամ գույքը տիրապետող այլ անձին պատճառված վնաս**» հասկացությունը չպետք է նույնացնել ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու ընթացքում պատճառված վնասի հետ: Ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու ընթացքում հանցավորը շահադիտական նպատակ չի հետապնդում: Եթե ոչնչացված կամ վնասված գույքը հանդիսացել է հափշտակության բաղկացուցիչ մաս, ապա արարքը ՀՀ քր. օր-ի 185 հոդվածով որակելը ճիշտ չէ: Այն դեպքում, երբ հափշտակություն կատարելիս գույքը զգալի չափով վնասվում է՝ արգելքները հաղթահարելու նպատակով (օրինակ՝ շինության մուտքի դուռը կոտրելը, որտեղ պահվում են նյութական արժեքները և այլն), ապա տվյալ դեպքում գույքը ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմը ստանում է ինքնուրույն քրեաիրավական նշանակություն: Եթե գույքի ոչնչացումը կամ վնասումը թեկուզև կապված է հափշտակության հետ, սակայն ձևավորում է ինքնուրույն հանցակազմ, ապա կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ (օրինակ՝ պահեստից կատարված հափշտակության հետքերը թաքցնելու նպատակով կատարվում է պահեստի հրկիզում, ապա արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր-ի 177 հոդվածի և 185 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով):

Ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը կարող է հանդես գալ նաև այնպիսի հանցագործությունների հետևանք, ինչպիսիք են՝ ահաբեկչությունը (ՀՀ քր. օր-ի 217 հոդված), օդանավ, նավ կամ երկաթուղային շարժակազմ փախցնելը կամ զավթելը (ՀՀ քր. օր-ի 221 հոդված), զանգվածային անկարգությունները (ՀՀ քր. օր-ի 225 հոդված), խուլիգանությունը (ՀՀ քր. օր-ի 258 հոդված), վանդալիզմը (ՀՀ քր. օր-ի 260 հոդված), դիվերսիան (ՀՀ քր. օր-ի 303 հոդված) և այլն:

ՀՀ քր. օր-ի 185 հոդվածի հատկանիշները

րով արարքը ենթակա է որակման միայն այն դեպքերում, երբ ոչնչացվող կամ վնասվող առարկաները չեն գտնվում քրեաիրավական հատուկ նորմերի պաշտպանության ներքո և իրենց մեջ չեն պարունակում առավել ծանր հանցագործության հատկանիշներ: Օրինակ՝ հանցավորը, հրկիզելով շինությունը, կարող է նաև չնախատեսել, որ նրա ներսում մարդ է գտնվում, կամ հրշեջները հրդեհը մարելու ժամանակ կարող են ստանալ ուժեղ այրվածքներ: Սակայն նկատի ունենալով հրդեհի ուժգնությունը, հանցավորն ունի բոլոր հնարավորությունները նախատեսելու իր կատարած գործողությունների հնարավոր հետևանքները:

Հրկիզումն իրականացնողի մեղավորությունն այնպիսի հետևանքների նկատմամբ, ինչպիսիք են մարդկային զոհերը, կարող է արտահայտվել նաև հանցավոր ինքնավստահությամբ, քանի որ հանցավորը թեկուզև նախատեսում է այդպիսի հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի, ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն: Նման դեպքերում հանցավորի գործողություններն ամբողջությամբ ընդգրկվում են գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմի ծանրացուցիչ հանգամանքներում և արարքը լրացուցիչ որակելու կարիք չունի:

Եթե գույքի դիտավորյալ ոչնչացումը կամ վնասումը կատարվում են խուլիզանական դրդումներով, ապա ՀՀ քր. օր-ի 185 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքների բացակայության դեպքում արարքը որակվում է որպես խուլիզանություն: Այն դեպքում, երբ ուրիշի գույքի ոչնչացումը կամ վնասումը կատարվել է խուլիզանական դրդումներով և գույքը գտնվել է այնպիսի հանգամանքներով, որոնք նախատեսված են ՀՀ քր. օր-ի 185 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով (հրկիզման, պայթեցման կամ հանրավտանգ այլ եղանակով, խոշոր չափերով, առանձնապես խոշոր չափերով, անզուրուքությամբ առաջացրել է մարդու մահ կամ պատմական, գիտական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաների ոչնչացում կամ վնասում), ապա պատասխանատվությունը պետք է վրա հասնի հանցագործությունների համակցությամբ: Այս

դեպքում խնդիրը վերաբերում է գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու այնպիսի շարժառիթներին, որոնք կատարված արարքին հաղորդում են հանցագործության բնույթ՝ ուղղված երկու տարբեր օբյեկտների դեմ՝ սեփականության և հասարակական կարգի դեմ:

Իրավաբանական գրականության մեջ տարակուսանք է առաջացրել նաև այն ձևակերպումը, որի հիմքում ընկած է **«գույքը տիրապետող այլ անձ»** հասկացությունը: Այլ անձը (ոչ սեփականատերը) ուրիշի գույքը կարող է տիրապետել ոչ միայն օրինական, այլև անօրինական ձևով: Այնուհայտ է, որ քրեական օրենքը պետք է պաշտպանության տակ առնի այն անձանց շահերը, որոնք ուրիշի գույքը տիրապետում են օրինական հիմքերով: Սակայն պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ հափշտակված գույքի **«հափշտակումը»** սեփականատիրոջը վնաս չի պատճառում, այլ «վնաս» է պատճառում այն անձին, ով հափշտակել է գույքը դրա իրական սեփականատիրոջից, ով իրականում վնաս է պատճառել սեփականատիրոջը և ով դրանով իսկ անօրինական տիրապետում է ուրիշի գույքը: Որոշ հեղինակների կարծիքով, այդ պրակտիկան ենթակա է վերանայման և հափշտակության բնորոշման մեջ «գույքը տիրապետող այլ անձ» ձևակերպումը պետք է փոխարինել «գույքի այլ օրինական տիրապետող» ձևակերպմամբ (այսինքն՝ այն անձը, որն ուրիշի գույքը տիրապետում է օրինական հիմքերով): Նաև առաջարկվել է, որ նախկինում հափշտակված գույքի **«հափշտակումը»** նախատեսվի առանձին հանցակազմի տեսքով (առանձին հոդվածով), սակայն ոչ թե հափշտակության համար պատասխանատվություն նախատեսող հոդվածներում, այլ՝ «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում՝ առանձին հոդվածի տեսքով: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ օրինակ՝ ՌԴ-ի նոր քրեական օրենսգրքի առաջարկվող բոլոր նախագծերում տվյալ հանցակազմի համար նախատեսվում էր համապատասխան հոդված, որը, սակայն, օրենսդրի կողմից չընդունվեց և դրա փոխարեն առաջարկվեց պատասխանատվություն նախատեսել **«Այնուհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելու կամ իրացնելու»** համար (ՀՀ քր. օր-ի 216 հոդված): Սակայն այստեղ կասկած է հարուցում

այն փաստը, որ վերը նշված հանցակազմը նախատեսված է «Տնտեսության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում: Պետք է նկատի ունենալ, որ ակնհայտ հանցավոր ճանապարհով գույք ձեռք բերելու հանցակազմը որևէ կերպ կապված չէ տնտեսության իրավաչափ գործունեության հետ և այն առավել մոտ է հափշտակությանը: Ուստի առավել նպատակահարմար կլիներ, որպեսզի նշված հանցագործության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմը ընդգրկվեր «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում¹²:

Ըստ հանցակազմի (օբյեկտիվ կողմի) օրենսդրական նկարագրության եղանակի առանձնահատկության, հանցակազմերը լինում են՝

- 1) նյութական,
- 2) ձևական,
- 3) հատված:

Նյութական են համարվում այն հանցակազմերը, որոնցում վտանգավոր հետևանքները նկարագրվում են (կամ դրանց առկայությունը ենթադրվում է) որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ: Նման դեպքերում օրենքում նկարագրված վտանգավոր հետևանքների առաջացումը պարտադիր է հանցագործությունն ավարտված ճանաչելու համար: Հակառակ դեպքում (եթե հետևանքները չեն առաջանում) արարքը որակվում է որպես **հանցափորձ**: Ուրիշի գույքի հափշտակության դեպքում, որպես օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, նյութական հանցակազմի մեջ ընդգրկվում են **հանրորեն վտանգավոր հետևանքները**: Հափշտակությունների դեպքում հանցագործության արդյունքն արտահայտվում է սեփականատիրոջը ռեալ նյութական վնաս պատճառելու մեջ, որի չափը որոշվում է հափշտակված գույքի արժեքով: Որքան մեծ է հափշտակված գույքի արժեքը, արտահայտված դրամական գումարով, այնքան ավելի մեծ նյութական վնաս է պատճառվում սեփականատիրոջը և այդքան անգամ ավելի մեծ է հափշտակության չափը: Մի շարք հանցակազմերում (օրինակ՝ գողություն, կողոպուտ, յուրացում, վատնում և այլն) պատճառված վնասի չափը դիտվում է որպես հանցագործությունը **որակյալ** («գույքի հափշտակությունը զգալի չափերով») և **առանձնապես որակյալ** («խոշոր չափերով») և **առանձնապես խոշոր չափերով») դարձնող հատկանիշ**: Ընդ որում անհրաժեշտ է, որպեսզի հանրորեն վտանգավոր արարքը կատարող անձի ակտիվ գործողությունների և դրա հետևանքների միջև առկա լինի **անհրաժեշտ պատճառական կապ**: Հափշտակությունը համարվում է ավարտված հանցագործություն սկսած այն պահից, երբ հանցավորը, փաստացի տիրանալով գույքին, ռեալ հնարավորություն է ստանում այն տնօրինելու և, որպես իր սեփականությունը հանդիսացող գույքի, իր հայեցողությամբ օգտագործելու: Սուբյեկտի մոտ հափշտակված գույքն օգտագործելու և տնօրինելու ռեալ հնարավորության բացակայության դեպքում բացակայում է նաև հափշտակության ավարտված հանցակազմի առկայությունը: Տվյալ դեպքում հանցավորի արարքը ենթակա է որակման՝ որպես ուրիշի գույքի հափշտակության հանցափորձ:

Հանցագործությամբ պատճառված վնասը կարող է լինել երկու տեսակի՝ բարոյական և նյութական: Հափշտակության դեպքում ակնհայտ է, որ հետևանքը հանդիսանում է նյութական վնասը: Տեսության մեջ և պրակտիկայում «նյութական վնաս» ասվածը հասկացվում է միայն իրական պատճառված վնասը, որն ի տարբերություն տվյալ գույքի նկատմամբ բաց թողնված օգուտների, որոշվում է հափշտակված գույքի արժեքով:

